



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





29 JUL 2000

~~295 29/10 38~~  
~~764 19/6 38~~  
1130 5/239



76.5  
~~9-87~~

ԲՃ. Ա. ԲՈՒԿՈՐՂԵԱՆ



ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
Ս.ՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ



# ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՀՐԱՏ. ՏԻԿ. ՉԱՐԵԼԻԻ

1. ԳԱՐԸ ԵՐԳՈՒՄ Է 10 ԿՈՊ.
2. ՃՇՄԱՐԻՏ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ 7 «
3. ԱՐԴԱՐ ԾԵՐՈՒՆԻՆ
4. ՄԵԾ ՄԱՐԴ
4. ՄԵԾ ՏՕՆ

Մամուլի տակ է  
ՆՈՐ ԼՈՅՍ

ԴԻՄԵԼ՝ Գրավաճառներին

ՅՈՎՉԱՆՆԵՍ ԱՐԱՄԵՆՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԻՏԵԱԼ ՊՕՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Բեօրնսոն՝ կազմեց Ե. Թոփչեան . . . 10 կ.
2. Մահմեդ՝ » » » . . . 7 »
3. Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. . . 5 »
4. Սահակ Պարթև՝ » » . . . 5 »
5. Հառապաման՝ » » . . . 15 »
6. Մեծն Ներսէս՝ » » . . . 5 »
7. Զրազաշտ կազմեց Մ. Թամամչեան. . . 7 »
8. Ընտրութիւն կաթնատուների (26 պատկ.) 15 »
9. Վիրխով—բժ. Ա. Բուզուզեանի . . . 25 »

Պատրաստուում են նոր հրատարակութիւններ:

Դիմել՝ գրավաճառներին:

176.5  
F-94 W

300

Բժ. Ե. ԲՈՒԳՈՒԳԵՆԸ

1178-ԲՈՒ



## ՊՈՒՆԿՈՒԹԻՒՆ

ԵՒ

## ԱՆԵՌԱԿՈՒԹԻՒՆ

11511



Պոսկուրեան պատմաբանը: Արդի Պոսկուրիս: Սիմիլիս: Վերահնգուրեան պակասարիս: Ընկերական-սեփական պայմաններ: Կին եւ սպամարգ: Կրուրիս եւ դաստիարակուրիս: Անճնաւորուրիս, կնոջ աշխատանք եւ վարձ: Ամուսնուրիս: Կեանք կախ եւ շարժարան է:

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մաղաթեան փողոց, № 15.  
(50) 1904



Дозволено цензурою. Тифлисъ, 9-го Сент. 1904 г

### ՍՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

«Սալմաստի գաւառում ենք: Մահլամ հայ գիւղը: Ժողովուրդը մի զարմանալի օր է տեսնում: Նա կուտուած է փողոցներում, ախանատես է մի չտեսնուած երեոյթի:

Բազմութիւնը յուզուած է. բազմութիւնը կարծես տեսնում է, որ իր մէջ, իր թշուառ հողի վրայ, արդարադատութիւն է կատարում: Ո՞վ բերեց նրան:

Մի վարդապետ \*):

Տնծաց Սալմաստի դժբախտ հայ ազգաբնակիւթիւնը: Վարդապետի վեղարի մէջ նա տեսնում էր իր պաշտպանին: Իսկ պաշտպան ունենալ մի այնպիսի խաւար ու տանջանքներով լի երկրում,— դա մի բախտ է, որ միայն անպաշտպաններն ու իրաւագուրկները կարող են հասկանալ և գնահատել:

Ժողովուրդը հասկացաւ, գնահատեց, իսկ վարդապետը սկսեց պաշտպանել նրան: Այն էլ ի՜նչպէս:

Մահլամ գիւղում վարդապետը հասարակական դատաստքն է սկսել: Այսօր այդ դատաստանին ախանատես է անագին բազմութիւնը:

Դատում և քննում է վարդապետը խիստ անողորմ կերպով, Եհովայի նման: Անխնայ, նախանձոտ էր

\*) Գործող անձի անունը յամենայն դէպս բաց ենք թողնում: Ա. Բ.



Եհովան: Եւ մեր վարդապետը նրա երկրպագուն է: Ութը կանայք կանգնած են վարդապետի առջև: Մեղադրուողները: Նրանք յանցաւոր են, նրանք մի ինչ որ չարագործ Դարձօի սիրուհիներ են: Քանի կենդանի էր այդ չարագործը, ոչ ոք չէր համարձակուում այդ յանցաւոր սիրուհիներին մի բան ասել: Չարագործը սպանուեց և անա վարդապետը թռչում է Մահլամ՝ մեղաւորներին սրով և կրակով պատժելու համար:

Եւ դատավճիռը արագ է, խիստ է, ասիական է: Ութ կանայք սարսափելի կերպով ձեծուում են... հրապարակով: Ապա այդ կանանցից հինգի վերաբերմամբ արձակուում է այն վճիռը, որ նրանք պոռնիկներ են, ուստի նրանց ծամերը պիտի կտրուին ամենքի աչքի առաջ: Ծամ կտրելը սոսկալի պատիժ է կնոջ համար: Երբ մի կին անիծում է միւսին, «ծամդ կտրեմ», ասում է նա իբրև վիրաւորանք, դժբախտութիւն արտայայտող մի գործողութիւն: Մահլամի հինգ կանայք, հինգն էլ զաւակների և ամուսինների տէր, հրապարակական այս սոսկալի վիրաւորանքին են ենթարկուում, բարոյական մահ են ընդունում: Երեք մնացածները, որոնք, ինչպէս ասում է թղթակիցը, «չարժանացան ծամեր կտրելու բախտին», փոխարէնը աւելի ևս սաստիկ ձեծ կերան:

Ծամեր կտրելու բախտ... Ո՞վ գիտէ, գուցէ Սալմաստում իրաւ որ դա բախտ է: Արևելքում «պոռնիկ» կանանց կապում են ձիերի պոչից և քաշքշում փողոցների և հրապարակների մէջ: Վարդապետը, բարեբախտաբար, մոռացած է եղել Արևելքի կողեքսի այդ յօգուածը: Եւ այս մոռացութիւնը, անկասկած, մեծ բախտ է եղել հրապարակով անպատուած, յօշոտած ութ կանանց համար...

Ահա ինչպիսի բան տեսնելու համար է հաւաքուած Մահլամ գիւղի մէջ այնքան մեծ բազմութիւն:

Իէպքը չափազանց անհաւատալի էր՝ նոյն իսկ

Պարսկաստանի պէս մի երկրի վերաբերմամբ: Պարսկաստանում այդպիսի դատաստան կարող է անել մի սարփարաստ, մի Ֆարբաշբաշի, մի ներքինապետ, — բայց մի քրիստոնեայ վարդապետի ձեռքով այդպիսի դատավճոյի տակ ընկնել — անհաւատալի էր, բոլորովին անհաւատալի: Սակայն, ընթերցող, դու պիտի հաւատաս, ինչպէս վերջը հաւատացի և ես, կարդալով Սալմաստից ուղարկուած շատ նամակներ, որոնք միևնոյն դէպքն են նկարագրում:

Իէպքը, այո, եղել է: Մահլամի այդ դատաստանը իրողութիւն է...

Այդ իրողութիւնը կատարուել է հրապարակում հարիւրաւոր մարդկանց աչքի առջև: Թէև վարդապետի «արդարագատութեան» ասպարէզը մի հեռաւոր, խուլ ու մութ անկիւն է, բայց շնորհակալ լինենք, որ այդքան կտրած անկիւններն էլ այսօր երևան են գալիս հասարակական մամուլի լայն ու մեծ հրապարակում, և մենք, ընթերցող, կարող ենք նոյնպէս խառնուել մահլամցիների հետ և ասել, թէ ինչ էր վարդապետ — դատաւորի արածը:

Թղթակիցները — ցաւալի բան — կարծես ուզում են հաւատացնել մեզ, թէ դա արդարագատութիւն էր: Գուցէ ինքը, Մահլամը և անհասարակ ամբողջ Սալմաստը նոյն անունն է տալիս վարդապետի այդ գործին: Իսկ դա մի «արդարագատութիւն» է, որը միայն Մահլամի և Սալմաստի պէս տեղերում կարող է գոյութիւն ունենալ: Իսկ այլ տեղերի համար, ուր մարդը աւելի բարձր իրաւական հասկացողութիւն ունի, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար այդ դատաստանը, այդ տեսակ պատիժը վրդովեցուցիչ մի գործ է, մի ծանր յանցանք՝ «մարդ» անունով հասկացողութեան դէմ: Ո՞վ խայտառակուեց Մահլամ գիւղի հրապարակում: Միթէ ութ կեղեքուած, հանդիսաւոր կերպով բարոյական մահուան ենթարկուած կանայք: Ո՛չ: Այդ



կանանց թիւը կարող էր աւելի մեծ լինել, պատիժը կարող էր աւելի խիստ, աւելի անգութ լինել: Բայց խայտառակուողը մեր վայրենի հասկացողութիւնն էր յանցանքի և պատժի մասին: Այդ օրը ցոյց տրուեց հրապարակով, թէ հաղար հինգ հարիւր տարի քրիստոնէութիւն ևնք պաշտում, բայց մեր հասկացողութիւններով չենք հեռացել Դարեհի ժամանակից, արիւնարբու գազանութեան իմաստութիւններից:

Եւ ի՞նչն է այսպէս ասել ստիպում: Մահլամցի ութ կանանց անմեղութիւնը: Ամենից առաջ հեռացնենք անմեղութեան հարցը: Դատապարտուածների մասին ես նոյնքան բան գիտեմ, որքան դու, ընթերցող: Յանցաւոր են նրանք, ճիշտ որ սարսափելի ոճիրներ են գործել: Չը գիտենք, հարկաւոր էլ չէ որ իմանանք: Թող լինեն յանցաւոր, նոյն իսկ արտակարգ յանցաւոր: Հարցը այդ չէ, հարցը յանցանք գործելը չէ: Այստեղ մի միայն դատաւորի հարց կարող է լինել...

Արեւելքը այսօր էլ այն հասկացողութիւնն ունի, որ մարդը, յանցանք գործելուց յետոյ, դադարում է մարդ լինելուց: Յանցաւորը մի հրէշ է, որին պէտք է ստորացնել, պէտք է դուրս վռնգել մարդկութեան շրջանից: Յանցաւորի վրայ գազանական անգութութիւններ թափել, յանցաւորին տանջել ու յօշոտել այն բոլոր դժոխային հնարքներով, որ կարող է ստեղծել մարդգազանը,—այս է միակ արդարութիւնը, որ ճանաչուած է բարբարոս ազգերի մէջ: Եւ մենք անշուշտ բարբարոսներ ենք, եթէ տմարդի պատիժներն են մեզ բաւականութիւն պատճառում, եթէ բաղաքակիրթ մարդկութեան հետ չենք դաւանում, որ յանցաւորը մարդ է, որ չը պէտք է յանցաւորի մէջ սպանել մարդկային արժանաւորութիւնը:

Ութ կանայք յանցաւոր են ճանաչուած իրրև պոռնիկներ: Մի բոպէ թողնենք, ընթերցող, Մահլամ գիւղը, թողնենք քսաներորդ դարը և մտքով տեղափոխուենք

Հրէաստան, հաղար ինն հարիւր տարի առաջ: Յիշեցէք Աւետարանի չքնաղ կտորը: Հրէաները մի պոռնիկ կին են բերել Քրիստոսի մօտ և ասում են, թէ իրանց հայրերի օրէնքով պոռնիկ կնոջը պէտք է քարկոծել: Աստուածային ուսուցիչը այդ բարբարոս օրէնքը ոչնչացնում է մի հասարակ հրաշալի խօսքով: Ո՞վ է ձեր մէջ արդարը,—ասում է նա,—թող այդ արդարը առաջին քար գցէ: Որքան խոր կերպով էր հասկացուած մարդկային բնաւորութիւնը: Ո՞րպիսի գեղեցիկ դաս՝ դատել ու դատապարտել կամեցողի համար: Դատաւորը պիտի հասկանայ դատապարտողին. պիտի հասկանայ հէնց այն պատճառով, որ ինքն էլ նոյնպիսի մարդ է, ունի նոյնպիսի հոգի, նոյնպիսի հակումներ դէպի յանցանքները, դէպի վատութիւնը: Եւ ինքը, երկնային վարդապետը, վերաբերուեց այդ պոռնիկ կնոջը իբրև մի մարդու, որ հոգի ունի, սիրտ ունի, որին տուած է զգալու ընդունակութիւնը: Նա ցաւակից, զթառատ եղաւ դէպի ընկած մարդը և ազատեց այդ ընկածին, բժշկեց, կենդանացրեց նրան:

Նայեցէք այդ վարդապետի աշակերտին Մահլամ գիւղում: Ո՞րպիսի ցաւալի, վրդովեցուցիչ տարբերութիւն: Ոչ Քրիստոսի օրինակը, որ մարդկութեան մէջ ծնունդ նոր մտքի, նոր հասկացողութեան արշալոյսն է, ոչ մեր մարդասէր դարը, ոչ իրաւաբանական գիտութեան արած նուաճումները՝ գոյութիւն չունեն Մահլամի դատաւորի համար: Նա այսօր էլ դեկավարում է ամբոխային այն բարբարոս հասկացողութեամբ, որ պոռնիկին, ընկած կնոջ քարկոծել էր ուզում Քրիստոսի առաջ: Իզո՞ւր էր, ուրեմն, այնքան երկար ժամանակն անցնում աշխարհի վրայով, իզո՞ւր այնքան նահատակութիւններ տեղի ունեցան մարդկային իրաւունքի համար: Մեզ համար ամեն ինչ իզուր է անցնում: Եւ այսօր, երբ մենք գնում ենք Պարսկաստանի նման մի դժբախտ երկիր բարեկարգելու ու լաւացնե-



լու, տանում ենք մեզ հետ մտրակ՝ ծեծելու և մկրատ՝  
ծամեր կտրելու համար...

...Այնուամենայնիւ, մենք ծեծում ենք հայ կնոջը  
հրապարակով, կտրում ենք նրա մազերը, այսինքն հրա-  
պարակով վերցնում ենք նրանց և մինչև գազաթի ծայ-  
րը խրում ցեխի մէջ:

Վարդապետը, անշուշտ, բարի գիտաւորու-  
թեամբ է ձեռք զարկել Մահլամի ինքուզիցիա-  
կան պատիժներին: Անշուշտ նա ասել էր իր մէջ, արե՛  
մի լաւ պատժեմ, որպէսզի բարոյականութիւնը հաս-  
տատուի հայ ընտանիքների մէջ:

Բայց ուղղում է պատիժը, փրկում է պատիժը:  
Ո՛չ: Տաժանակիր բանտերի պատմութիւնը այն է ցոյց  
տալիս, որ պատիժը սպանում է մարդու մէջ այն  
ամենը, ինչ դեռ մնում էր յանցանք գործելուց յետոյ:  
Բանաւր, թիրարանները, հանքերի մէջ կատարուող տա-  
ժանակիր աշխատանքները չեն ուղղում, կրթում մարդ-  
կանց, դարձնում հասարակութեան պիտանի անդամ-  
ներ: Պատիժները թունաւորում են մարդկանց, աւելի  
մտեցնում են նրանց անասնական դրութեան: Հրա-  
պարակով սպանեցէք մարդու մէջ նրա ամբողջ ինքնա-  
սիրութիւնը, մարդկային գիտակցութիւնը, պատուի,  
արժանաւորութեան զգացմունքը, և դուք կը տեսնէք,  
որ ձեր խարազանի ու փայտերի տակից դուրս կը գան  
այնպիսի մարդիկ, որոնք իմանում են, թէ այլ ևս կոր-  
ցնելու ոչինչ բան չունեն, թէ բոլոր սանձերը պատ-  
ռուած են և չէ կարող լինել մի գրութիւն, որ աւելի  
վատ ու անպատուաբեր համարուի, քան այն գրու-  
թիւնը, որի մէջ արդէն գտնուում է նա: Իսկ այսպիսի  
դարհուրիւի գիտակցութեան հասած մարդը արդէն մի  
անէ՞ծք, մի ժանտախտ է հասարակութեան մէջ:

Մտրակը բարոյականութիւն ստեղծել չէ կարող:  
Եւ եթէ մենք, առաջնորդ հանդիսանալով մի դժբախտ  
ու խաւար ժողովրդի մէջ, դեռ չը գիտենք, որ մարդ

պիտի տեսնենք մեր նմանների մէջ, լինեն դրանք յան-  
ցաւորներ թէ մուրացկաններ, կին թէ տղամարդ, —  
ի՛նչ պիտի կարողանանք անել:

— Ոչինչ, կատարելապէս ոչինչ:

Մահլամի ժողովրդի համար աւելի լաւ կը լինէր  
չը տեսնել ոչ մի արդարադատութիւն, քան տեսնել  
այդ հին, գաղանական, զգուելի արդարադատութիւնը»:

Մեր յարգելի մատենագիր Լէօի այս ոսկի խօս-  
քերը, տպուած «Մշակի» 1903 թուի մայիսի 25-ի հա-  
մարում, ինձ առիթ տուին կազմել «Պոռնկութիւն և  
Անառակութիւն» գրքոյիս: Թէպէտ և նրա մէջ կան մի  
քանի «ականջի համար անախորժ» խօսքեր և նկա-  
րագրութիւններ, բայց նրանք անհրաժեշտ են: Սպեն-  
սերն ասում է. «Թշնամուն ճանաչելը—նրան կիսով  
չափ յաղթել ասել է»:

Բժ. Ա. Բուլուղեան

1904 թ. Պետերբուրգ:



Ա.

Այժմեան կեանքի մեծ նախապաշարունակներից մէկն այն է, որ լուեղեայն ընդունում են, թէ սիֆիլիսը մարդու անուն կտարող հիւանդութիւն է:

Չնայելով սրան՝ ժողովրդի միջից սիֆիլիսն արմատախիլ անելու խնդիրը մասնաւոր խնդրից դարձել է հասարակական, պետական և նոյն իսկ միջազգային խնդիր:

Սիֆիլիսի դէմ կռիւը, սակայն, մինչև վերջին օրերս եղել է իսկապէս մի կռիւ պոռնկութեան դէմ:

Պոռնկութիւնը մի վերին աստիճանի պայմանական հասկացողութիւն է:

Բարոյագէտները պոռնիկ են համարում ամեն մի մարդու, որ խանգարում է միամուսնութեան սկզբունքը, չի պահում ամուսնական հաւատարմութիւնը: Պոռնկութիւնն այսպէս հասկացած՝ այն ժամանակ շատ ու շատ մարդիկ են պոռնիկ և ընդհանրապէս ամեն ծախու սէր պոռնկութիւն է:

Եւ արդարև, մի՞թէ միայն այն կիներն է պոռնիկ, որին դեղին անցագիր են տուած:



Մի՞թէ պոռնիկ չէ և այն կիներ, որ ոչ թէ սիրոյ, այլ որևէ շահասիրական նպատակի համար է մօտիկ յարաբերութիւն ունենում տղամարդի հետ:

Մի՞թէ պոռնիկ չէ և այն կիներ, որ իր ծախած փողաքշանքի համար ոչ թէ միանուազ կամ օրական վճար է ստանում, այլ ամսական:

Մի ջահիլ աղջիկ որ մարդու է գնում մի հարուստ ծերուկի, կամ մի ամուսնացած կին որ շահասիրական նպատակով մօտիկ յարաբերութեան մէջ է մտնում մի մեծափարթամ կամ իր պաշտօնով ազդեցիկ մարդու հետ, — այդպիսիների բարոյական աշխարհը բնաւ աւելի բարձր չէ, կարելի է՝ նոյն իսկ ցած էլ է քան այն պոռնիկիներ, որից արհամարհանքով երես են դարձնում:

Իրանք էլ պոռնիկ են, ինչպէս և նրանք, որ ապրում են յայտնի փողոցներում և որոշ աների մէջ, կամ թէ անցորդներին ճանկում են մութ անկիւններում, մեծ փողոցներում, պրոսպեկտներում ու բուլուարներում:

Մի՞թէ տղամարդիկ էլ այնպէս չեն ծախում իրանց: Մի՞թէ չկան նոյնպիսի տղամարդիկ էլ, որոնք շահասիրական նպատակներով, երբեմն նոյն իսկ որոշ վճարով մօտիկ յարաբերութիւն ունեն կանանց հետ:

Ամօթ է ասել, որ շատ տղամարդիկ էլ կան, որոնք մօտիկ յարաբերութեան մէջ են մտնում մի կնոջ հետ, թէկուզ սա նոյն իսկ պոռնիկ լինի, և յետոյ իրանց կողմից որոշ վճարով ուրիշ-

ներին օգտուելու են տալիս այդ կնոջը. կամ թէ ընդհանրապէս ապրում են այդ կնոջ իր մարմնով աշխատածի հաշուին:

Եւ վերջապէս, եթէ խնդիրն այստեղ առևտրի մասին է, ո՞վ է աւելի վատ, — ծախողը, թէ՛ աննողը:

Ահա սրանք են միայն, մեր ընկերական և անտեսական հիւանդութիւնների մի քանի զոհերը, այն էլ այս դժբախտ զոհերի մի փոքր մասը միայն, որ ստանում են խայտառակութեան անցազրեր:

Ռուսիայում պոռնկութիւնը կանոնադրուած է, այսինքն որոշ կանոնների և կարգերի հիման վրայ պաշտօնապէս ճանաչւում է պոռնկութիւնը պետութեան մէջ իբրև մի պարապմունք, արհեստ:

Պետութիւնները պոռնիկները այս համբարութիւնը ստեղծում են ի միջի այլոց և այն համոզմամբ, թէ պոռնիկները մի առանձին տիպի, մի առանձին տեսակի մարդիկ են:

Իրանց այս համոզման համար պետութիւնները պաշտպանութիւն են գտնում մի քանի գիտնականների, մասամբ և այնպիսի մարդկանց հեղինակութեան մէջ, որոնք գործին մօտիկ են և լաւ ճանաչում են այս «չարիքը»:

Մեծ կշիռ ունի այս խնդրի նկատմամբ նշանաւոր մասնագէտ պրօֆէսոր Տառնուվսկու կարծիքը:

«Պոռնկութեան միջուկը, ասում է նա, միշտ այն կանայք են կազմում, որոնց համար պոռն-



կութիւնը և իր հետ կապուած անառակութիւնը մի ցանկալի կենցաղավարութիւն է, որ լիովին բաւարարութիւն է տալիս իրանց. այդպիսիները յօժարակամ չեն թողնում իրանց արհեստը և եթէ կտրւում էլ են իրանց արհեստից, միշտ նորից նրան են վերագտնում: Այդպիսի կանայք հիւանդագին կերպով գարշում են ամեն մի աշխատանքից և բարոյապէս այնքան են բթացած, որ ծախու սիրոյ խայտառակութիւնն անհամեմատ պակաս ծանր է թւում իրանց, քան ուրիշ որևէ պարագմունք և աշխատանք»:

Ասել չի ուզիլ, որ պոռնկութիւնը գոյութիւն ունի մի ամբողջ շարք ընկերական և տընտեսական պատճառներով, ի միջի այլոց և պահանջի ու առաջարկութեան օրէնքով, և որ մենք տղամարդիկս ենք ստեղծել այն, սովորած լինելով կարծել՝ թէ բնութիւնը մեզ մի առանձին տեսակ է ստեղծել և թէ կինը մի ստորագրեալ էակ է, որ պարտական է իր տիրոջ ու գլխաւորի ցանկութիւնը կատարել:

Պատմութիւնից ևս յայտնի է, որ պոռնկութեան խնդրի մէջ պիտի գլխաւոր դեր կատարած լինի կնոջ սարկութիւնը:

Մենք գիտենք թէ ո՞վ է եղել Եւային խաբող օձը և թէ ինչպիսի խնձոր է տուել նա առաջին կնոջը:

Բայց Աստուածաշունչը արդէն ասում է, որ Աբրահամ նահապետն է եղել առաջին մարդը, որ խանգարել է միակնութեան սկզբունքը:

Իր Սառան որ ծերացաւ, Աբրահամը իրան մօտեցրեց իր աղախին Ագարին:

Բայց երբ Ագարի ոտը ծանրացաւ, նրան անից դուրս արաւ:

Որ Ագարն այնուհետև Խամայելացոց հզօր ազգի նախամայրն է դառնում, և ոչ թէ մի պոռնիկ, ինչպէս լինում է սովորաբար այդպիսի դէպքերում, այդ միայն այն պատճառով է այդպէս լինում, որ նրան անապատ են քշում և ոչ թէ մի մեծ մարդաշատ քաղաք:

Այս պատմութիւնը կատարուել է մեզնից վեց-եօթ հազար տարի առաջ, բայց կարող էր կատարուել և երէկ, և կատարւում է ընտանիքների մէջ ամեն օր և ամեն ժամ:

Ագարն էլի լաւ է, որ ջուրը չձգեց իրան, ոչ էլ թոյն առաւ, մեռաւ. նա գնաց անապատ, և, ասենք, նախախնամութիւնը պահեց նրան:

Բայց այժմ այդ չկայ: Այժմ ոչ ոք տուն ներս չի թողնում մի աղախին իր ծծի երեխայով. նա ստիպուած է իր երեխան մի տեղ, մի ուրիշ պահ տալ և աշխատել թէ իր և թէ իր երեխայի համար: Ահա թէ ինչն է նրան առաջին անգամ դէպի աւելի թեթև աշխատանքը մղում:

Բայց եթէ այդ աղախինը կամենում է պատուաւոր աղջիկ մնալ և բաւականանալ նրանով, ինչ որ ծառայութիւնից ստանում է, նա պէտք է հրաժարուի մայրութիւնից և երեխային փողոց շարտի:

Թողելով Աբրահամը՝ Աստուածաշնչից իմա-







օգուտ չի բերում առողջապահական կողմից, բայց եթէ այն, որ վիրաւորում է կանանց բարոյական զգացմունքը:

Բայց այդպէս է արդեօք: Դիմենք մարդկութեան պատմական կեանքին:

Պատմութիւնը հեքեաթ չէ. պատմութիւնը մարդկանց տանջանքների և ցաւերի շարքն է:

Հարկաւոր է գտնել այն անմիջական կապը, որ կայ անցեալի և ներկայ իրականութեան մէջ, և խրատ ու դաս առնել անցեալից:

Իզուր չէ ասել մի փիլիսոփայ, թէ մեզանից ամեն մէկը մի փոքր գոնէ պատմաբան պիտի լինի, որպէս զի կարողանայ գիտակցաբար և բարեխղճօրէն գործող քաղաքացի դառնալ և ընդհանրապէս ներկան հասկանալ:

Ազգերի պատմութիւնը կարգալով համոզւում ենք, որ խորին հնութիւնից սկսած՝ անառակութիւնը գոյութիւն է ունեցել. բարբարոսութեան դարերում ևս այս հասարակական ախտը երևան է գալիս, և չնայելով այն բոլոր խիստ հալածանքներին, որ ժամանակ ժամանակ գործ են դրել պոռնկութեան ամեն երևոյթիւնների դէմ, պոռնկութիւնը էլի երբեք չի վերացել ոչ մի ժողովրդից:

Հին ժամանակներում կիրնս այնքան քիչ արժէք է ունեցել, որ տղամարդին անձնատուր լինելը բնաւ այնպիսի խայտառակ բան չի համարուել, ինչպէս արդի հասարակութեան մէջ է:

Այն էլ պէտք է նկատել, որ այդպէս եղել է

ոչ միայն հասարակութեան ստորին, այլ և միջին և նոյն իսկ բարձր դասակարգերի մէջ: Այսպէս, յոյն մասենագիր Հերոդոտը պատմում է թէ Քէոպս Փարաւոնը իր հարազատ աղջկանը ստիպելիս է եղել պոռնկութիւն անել՝ տալով նրան ամեն մի ցանկացողի ձեռքը, և այսպիսով ձեռք բերած փողը հաւաքել ու նգիպտոսում մի բուրգ է շինել:

Բացի այս՝ այսպէս ասած՝ արհեստով պոռնիկ կանանցից, հին ազգերի մէջ եղել են և այնպիսիք, որոնք անառակութեան անձնատուր էին լինում մի առանձին աշխարհայեցողութեան պատճառով, որ ունէին հիւրասիրութիւն ցոյց տալու համար:

Այսպէս քիչ չէր պատահում, որ տանուտէրը իր հիւրին ընդունելուց և պատուելուց յետոյ, ուրիշ հիւրասիրութիւնների հետ առաջարկում էր նրան իր կինը, աղջիկը, և երբեմն նոյն իսկ մեծ վիրաւորանք էր համարւում տանտիրոջ համար, եթէ հիւրը նրա առաջարկութիւնը չէր ընդունում:

Այստեղից պարզ է, որ այն ժամանակի կանանց համար այնքան սովորական և հասարակ բան էր տղամարդկանց անձնատուր լինելը, որ իսկի բանի տեղ էլ չէին դնում:

Այս ամենը առաջ էր գալիս նաև այն հայեացքից, որ հին ժամանակ ունէին կանանց վրայ: Կինը ոչ թէ մարդ էր համարւում, այլ աւելի իրեզէն մի «մալ-ապրանք», մի աղախին, որին վարձանք կամ բաշլըղ տալով գնում էին և որ պէտք



է միայն տղամարդի կամ իր «սիրոջ» գուարձութեան համար ծառայէր:

Մինչև այժմ ևս մեզնում դեռ տեղ տեղ կնոջը «մալ» կամ «ապրանք» անարգական բառով են կոչում, իսկ իր ամուսինը «տէր» կամ աւելի՛ լոկ «մարդ» է կոչում:

Մի՞թէ մեզանում շատ տեղերում դեռ չի մնում կին գնելու այդ անարգ սովորութիւնը, «բաշլըղը» կամ «ղալանը»:

Գէորգ Դ. կաթողիկոսը իր ընդհանրական թղթերի մէջ արգելած է այդ բարբարոսական ժամանակների մնացորդները. բայց լոկ հրամաններով չի վերանալ, ինչ որ դարերով բուն է դրել մի ժողովրդի մէջ:

Դեռ մեր կեանքի ցաւալի կողմերից մէկն է այդ, որ կնոջը փողով գնում են իբրև մի աշխատող ձեռք տան համար: Եւ որ ամենից ցաւալին է, մի քանի կողմերում, ինչպէս Շիրակում, Սարգարապատի մհալում, Վանայ կողմերում, 20—25 տարեկան աղջկան գնում են 10—15 տարեկան տղայի համար:

Տեսէք թէ ինչ է ասում մի ժողովրդական երգի մէջ մի «մատաղ մանուկի» կին դարձած հասակ առած աղջիկը.

«Աման աղէ, ի՞նչ արեցիր \*)

Էս քո զնաղին ո՞ւտ ճարեցիր.

\*) Այս ժողովրդական երգը ինձ հաղորդել է պ. Մանուկ Աբեղիան: Բժ. Ա. Բ.

Թամահ արիւր հարիւրնոցին,  
Ինձի տուիր գրկանոցին»:

Եւ մի՞թէ այդպիսի անբնական ամուսնութեան հետևանքը չի լինում պոռնկութիւն: Եւ մեր այդ ժողովրդական երգի մէջ այդ, «մատաղ մանուկի» փողով գնած կինը իրան իրաւունք է համարում «սիրողներ» ունենալ և յաճախել նրանց մօտ:

Բացի իր «մարդուն» ծառայելուց և նրա համար աշխատելուց՝ այդ փողով գնած մալը պէտք է նրա համար և որդիք ծնէր: Եւ որպէս զի որդիների գարմը, այսինքն ջինսը, աւելի լաւ լինէր, հին ժամանակներում այդ աղախիներին «տէրը», ինչպէս որ այժմ ձիաբուծարանների տէրերն անում են, իրանց կանանց տալիս էին հիւրերին, որպէս զի վերջիններիս գուարձութիւն պատճառեն, իսկ իրանց գաւակների սերունդը ազնուացնեն:

Ահա թէ ինչ անառակութիւն էր ծնում հիւրասիրութիւնից:

Բայց կայ մի ուրիշ, այսպէս ասուած՝ կրօնական անառակութիւն ևս: Կրօնական պաշտամունքի անուան տակ շատ և գանազան անառակ հանդէսներ էին կատարում ի պատիւ Իզիսի, Վեներայի, Բաքոսի և ուրիշների:

Չին եզիպտոսում մի տօնախմբութեան ժամանակ բացարձակ կերպով, նոյն իսկ տաճարի դռանը, աղջկերքը խառնակում էին քրմերի հետ՝



աստուածութեան պաշտամունքը կատարած լինելու համար:

Միևնոյնը կատարուում էր և Բաբելոնում Վեներա աստուածուհու տաճարի մօտ: Բոլոր, մինչև անգամ ամենահարուստ և նշանաւոր մարդկանց աղջկերքը ժողովուում էին այս դիցուհու սրբազան անտառում, որ տաճարի կշախն էր, և այնտեղ կատարում էին աստուածուհու պաշտամունքի շնական սովորութիւնը:

Ի՞նչ ասել կուզի, որ այդպիսի սովորութիւնները խիստ ազգում էին բարքերի ապականութեանը Բաբելոնում. ուստի և ահագին անառակութիւն և պոռնկութիւն էր անասելի կերպով ծաղկելով արմատակալել այնտեղ: Եւ այդ ապականութիւնն է լինում գլխաւոր պատճառներից մէկը, որ հասարակութիւնը կազմալուծուում է, և մեծ Բաբելոնը—այդ Պարիզը—ընկնում և անհետանում է երկրի երեսից:

Եթէ հաւատանք յոյն մատենագիր Ստրաբոնի խօսքերին, կրօնական անառակութիւնը եղել է և Հայաստանում ու Ասորիքում: Այստեղ, Ասորիքում, Իշտար, որ է Վեներայ աստուածուհու համար մի տաճար կար կառուցուած, որի կողքի շինութիւնների մէջ նոյն աստուածուհու քրմուհին կատարում էր տաճարն եկողների ցանկական կամքը:

Երկու բաժանմունք կար շինուած, մէկը տղամարդկանց համար, միւսը՝ կանանց:

Այս քրմուհիները պատկանում էին ժողովրդի

ամենալաւ և նշանաւոր ընտանիքներին. իրանց ամենից մերձաւոր ազգականները որոշ ժամանակով տալիս էին նրանց տաճարը: Ժամանակը լրանալուց յետոյ նորից գալիս էին իրանց տները, ուր բնաւ չէին քաշուում կամ ամաչում իրանց գործի համար. այլ, ընդհակառակը, մինչև անգամ աւելի մեծ յարգանք էին վայելում և աւելի հեշտ էին փեսացուներ ճարում:

Այնպիսի կոպիտ տգիտութիւն և այնպիսի խորը խաւար էր թագաւորում, որ այդ աղջկերանց փեսացուները երբեմն հարսանիքից առաջ մինչև անգամ մանրամասն տեղեկութիւններ էին հաւաքում թէ այս կամ այն աղջիկը ինչպիսի գործունէութիւն կամ կեանք է ունեցել տաճարում եղած ժամանակ: Մէկ մէկ հարց ու փորձ էին անում, թէ քանի հիւրեր են ունեցել, և որքան շատ՝ այնքան աւելի մեծ էր լինում այս նախկին քրմուհիների գինն ու արժէքը:

Հայաստանում, բարեբախտաբար, այս անառակութիւնն ընդարձակ տարածութիւն չի գտել և եղել է միայն մեր երկրի հարաւային-արեւմտեան կողմերում, ուր հայերը ասորիների հետ խառն ապրում էին և ուր ասորիներից շատերը հայացել էին: Ասորոց Իշտար աստուածուհու այս անառակ պաշտամունքը հայացած ասորիների ձեռքով անցած է եղել հայոց Անահիտ դիցուհուն, որի բնաւորութիւնը սակայն Ստրաբոնից մի չորս դար յետոյ հաստատ յայտնի է, որ նոյն իսկ ասորական տեղերում ևս արդէն ազնուացած



էր: Անահիտը դարձած էր անարատութեան, անբծութեան աստուածուհի, և «մայր ամենայն զգաստութեանց», ինչպէս և եղել է հէնց սկզբից այդ աստուածուհին:

Փիւնիկեցիները մէջ, որ հին ճարտարարուեստ ազգերից էին, Աստարտէ աստուածուհու անունով կատարուած կրօնական պոռնիկութիւնը առևտրական բնաւորութիւն էր ստացել, որ և ընդհանրապէս յատուկ էր այդ ազգին:

Փիւնիկեցոց կարթագինէ քաղաքի դռների մօտ շինուած էին աղջկանց տաղաւարներ, քօշքեր ու վրաններ, որ հասարակաց տներ էին: Այստեղ աղջկերքը իրանց ծախելով օժիտ էին ժողովում և ապա մարդու գնալով՝ այնքան աւելի էին վայելում իրանց էրիկների յարգանքը, որքան աւելի փող էին զիգել:

Ասել չի ուզիլ, որ այդ ձևով մարդու գնալը շատ անգամ երկար տարիներով ետ էր ընկնում. ամեն աղջիկ չէր կարող բաւականին փող զիգել. որովհետեւ անգին բազմութեամբ էին աղջկերք հաւաքուում այնտեղ և իրար հետ մրցում էին:

Որքան ազգեր են կորել և կորչում են անառակութեան, պոռնիկութեան և սիֆիլիսի ձեռքից:

Նոյն իսկ հրէաները մէջ, որ հին կառավարանի դարերում օրէնքներով և կրօնով համեմատաբար աւելի խստաբարոյ էին քան ուրիշ ազգեր, նոյն իսկ այդ հին հրէաները մէջ շատ տարածուած ու սովորական բան էր պոռնիկութիւնը:

Հրէաները մէջ հայրն իրաւունք ունէր փո-

ղով իր աղջկանն իբրև հարձ ուրիշին ծախելու որոշ ժամանակով, որ նշանակուում էր պայմանի մէջ և հայրն իրան էր առնում իր աղջկայ հարձութեան փողը:

Այս առևտրին վերջ տուաւ Մովսէս մարգարէն, որ ասում է. «Մի ծախիր քո աղջիկներին, որպէս զի երկիրը չծածկուի աղտեղութիւններով և ապականութեամբ»:

Հրէաները մէջ անառակութիւնը ընդհանրապէս այնքան շատ տարածուած է եղել, որ նոյն իսկ երուսաղէմի տաճարի դռներ գտնուում էին աղջկերք, որոնք պոռնիկական առևտուր էին առնում:

Մովսէսի օրէնքները լի են այնպիսի ցուցումներով, որոնցից երևում է, որ ամեն տեսակի անառակութիւն, ազգապղծութիւն և հակաբնական անառակութիւն ընդարձակ չափով տարածուած են եղել հրէաները մէջ:

Կարելի է առանց սխալուած լինելու ասել, որ հրէական ազգի ամբողջ պատմութեան ընթացքում օրէնադիրներն ու մարգարէները շարունակ կուռի մէջ են եղել իրանց ազգի պոռնիկութեան և սեռական անժուժկալութեան դէմ:

Որքան ազգեր են կորել և կորչում են անառակութեան, պոռնիկութեան և սիֆիլիսի ձեռքից:



7.

Յունաստանում, հին աշխարհի այս կլասիկական երկրում, ամենահին ժամանակներից սկսած գոյութիւն է ունեցել պոռնիկութիւնը, որ ունեցել է կրօնական բնաւորութիւն:

Կարծում են թէ սիրոյ աստուածուհու, Ափրոդիտէի պաշտամունքը փոքր Ասիայից է անցել Յունաստան, ուստի և այս աստուածուհին նրանցում կոչւում էր «փրփրածին», այսինքն ծովի փրփուրից ծնուած, որ է ծովի այն երեսից եկած:

Միւրոյ աստուածուհու պաշտամունքը նրանցում երկու տեսակ էր կատարւում. յոյները Ափրոդիտէին մէկ պաշտում էին Ուերանիա (երկնային) անունով, իբր մի աստուածուհի, որ մաքուր, անարատ, գաղափարական սէրի անձնաւորումն էր. մէկ էլ Պանդեմոս (հասարակաց) անունով, որ հասարակ, զռեհիկ, զգայական սիրոյ, հեշտասիրութեան և ապականութեան դիցուհի էր:

Խիստ շատ կանայք բնակութիւն հաստատելով Պանդեմոս աստուածուհու տաճարների կըշտին, մինչև անգամ ներսում, այս դիցուհու պաշտամունքը կատարում էին ամեն տեսակ անկարգութիւններով ու խառնակութիւններով:

Այս կանայք իրանց արհեստի համար շանսխուր, այսինքն շնութեան վարձ էին առնում, երբեմն մինչև անգամ այնքան շատ, որ իրանց մօտ եկողներին ամենքին լաւ պլոկում էին ու

այնպէս ճանապարհ դնում, ինչպէս սովորաբար աշխատում է անել ամեն մի պոռնիկ կին:

Այս «կոյսերը» որ պառաւում էին և իրանց գրաւիչ կերպարանքը կորցնում, այն ժամանակ տաճարների մօտ պանսիոններ—բարոցներ էին պահում, ուր նորատի աղջկերքը սովորում էին դիւր գալու և Պանդեմոս աստուածուհուն լաւ պաշտելու արհեստը:

Որովհետև այս ամենը սերտ կապուած էր տաճարների հետ և երբեմն էլ մինչև անգամ տաճարների ներսում էր լինում, ուստի քրմերը մեծ դեր էին խաղում և անչափ հարստանում էին յաճախորդների հաշուին, որոնց երբեմն իսկապէս ոտից գլուխ պլոկում թողնում էին:

Այս պատճառով յունաց նշանաւոր օրէնսդիր Սոլոնն ուշադրութիւն դարձրեց այս բանի վերայ և հաստատեց «հասարակաց տներ» ասածը:

Կառավարութեան հաշուով Աթէնքում շինեցին տներ, սկսեցին ուրիշ երկրներից կանայք գնել և բերել, բնակեցնել այդ տներում, ուր չնչին վճարով ներս մտնել կարող էր ամեն ցանկացող: Բացի այս՝ առանձին կանոնադրութիւն մշակուեցաւ այս տների համար, և մի առանձին պետական պաշտօնեայ նշանակուեցաւ, որ կարգ կանոն պահէ այնտեղ:

Մեծ օրէնսդիրը անառակութիւնը բոլորովին անբարոյական էր համարում, ուստի կանոնադրութեան մէջ սահմանել էր, որ հասարակաց կանանց չթողնեն ուրիշ քաղաքացիների հետ հազորդակցու-



թիւն ունենան: Այս պատճառով այդ կանայք չէին կարող քաղաքի միւս մասերը գնալ. նրանք պէտք է ապրէին իրանց բնակութեան համար որոշուած մասերում:

Նրանք իրաւունք չունէին առանց հրաւերի ներկայ լինել հասարակական տօնախմբութիւններին և ժողովներին, և որպէս զի ուրիշ կանանցից զանազանուեն, նրանց համար առանձին տեսակ հագուստ էր որոշուած:

Հասարակաց տների եկամուտներով մի տաճար շինուեցաւ ի պատիւ պոռնկութեան աստուածուհու...

Շատ ժամանակ չանցաւ Սոլոնի կանոնները հաստատուելու օրից, որ շուտով արդէն սկսեցին պոռնիկների համար դրած կանոնները չպահել. հասարակաց կանայք սկսեցին ազատ կերպով ել ու մուտ անել Յունաստանի հասարակութեան ամեն խաւերի մէջ:

Քիչ չէր պատահում, որ նշանաւոր, յայտնի ու կրթուած հասարակաց կանայք, որոնց այն ժամանակ «հետերա», այսինքն ընկերուհի, բարեկամուհի էին կոչում, այնպիսի ազդեցութիւն էին ձեռք բերում հասարակութեան մէջ, որ այլ ևս ոչ կրօնական և ոչ քաղաքացիական օրէնսդրութիւնը չէր կարող աչքաթող անել նրանցից մի քանիսին, ինչպէս Ասպազիային ու Ֆրինային:

Սոլոնի բաց արած հասարակաց տներում տէրութեան հաշուով պահուում էին փողով գնած ստրկուհիներ:

Բայց որովհետև այսպիսի հաստատութիւնները պահանջը շատ մեծ էր, իսկ տէրութիւնը չէր կարող իր հաշուով ամեն տեղ այդպիսի տներ բաց անել, քանի որ տէրութիւնը իր աւելի կարևոր պիտոյքների համար էլ շատ փող չունէր, ուստի կառավարութիւնը թոյլ տուաւ, որ ամեն ուզեցող էլ բաց անի այդպիսի հասարակաց տներ:

Շատ չանցաւ՝ այդ տների թիւը այնքան մեծացաւ, որ նրանց համար որոշուած տեղերը բաւականութիւն չէին տալիս, և շուտով զրեթէ ամբողջ քաղաքում և նրա շրջակայքում երևան եկան հասարակաց տներ:

Սրա հետ միասին պոռնկութեան արհեստը բանեցնող կանայքն այլ ևս միայն ստրկուհիներ չէին, ինչպէս սկզբում, այլ և Յունաստանի ազատ քաղաքացուհիք, որոնց առաջ օրէնքով մահուան պատիժ էին տալիս այս բանի համար: Բայց յետոյ ժամանակի ընթացքում այս օրէնքը փոխուեցաւ հասարակ դրամական տուգանքի:

Բարքերի այս ապականութեան պատճառով հանդէս եկան ահազին բազմութեամբ կաւատներ ու մարճակալներ, որոնք պոռնիկ կանանց առևտրով էին պարսպում՝ ցոյց տալով իբր թէ դրանք իրանց ազգականը, կինը կամ աղջիկն ու քոյրն են:

Բացուեցին բազմաթիւ գաղանի որջանոցներ, ուր այդ կաւատները քաշում տանում էին հարուստ մարդկանց, և տեղն եկած ժամանակ լաւ



քերթում էին նրանց՝ սպառնալով մատնել և բռնաբարութեան մէջ մեղադրել նրանց:

Մի առանձին դաս էին կազմում Յունաստանում այն հասարակաց կանայք, որոնք «երաժիշտ» կամ «վարձակ» էին, այսինքն նուագում, երգում ու պարում էին: Սրանք իրանց աւելի բարձր ու պատուաւոր էին համարում քան սովորական հասարակաց տան կանայք, բայց իսկապէս այս «արտիստ կանայքը», այս «արուեստուհիներն» ոչնչով չէին տարբերւում հասարակ պոռնիկներէրց, եթէ միայն աւելի ևս լիտի ու փչացած չէին քան այս վերջինները:

Այս վարձակները, որ կոչւում էին «աւլետրիս», այսինքն սրնգահար, բոլորովին ազատ կեանք էին վարում և իրանց արուեստով, նուագածութեամբ պարապում էին գլխաւորապէս կրօնական տօնախմբութիւններին, նոյնպէս և հարուստ յոյների խնջոյքներին: Նրանց մէջ պատահում էին և շատ զարգացած կանայք:

Քիչ չէր պատահում, որ այս կանայքը հարբատանում էին, բայց յաճախ քամու բերածը քամին էլ տանում էր. նա, որ քիչ առաջ հասարակութեան մէջ փայլում էր իր հարստութեամբ, շուտով այնպիսի դառն աղքատութեան մէջ էր ընկնում, որ շան պէս շունչը փչում էր փողոցի մի անկիւնում, կամըջի տակ...

Այս կանայք կախումն ունէին տէրութիւնից. մինչև որ սատիկանութիւնից թոյլաւութիւն չբատանային, իրաւունք չունէին իրանք իրանց գլխու

թողնել հեռանալ իրանց բնակութեան տեղից: Բացի այդ՝ նրանք իրանց պարապմունքի համար որոշ հարկ էին տալիս, որ և բաւական եկամուտ էր բերում տէրութեանը:

Դ.

Պոռնիկութիւնը գոյութիւն ունէր և միւս հին լուսաւորւած ազգի մայրաքաղաքում, Հռոմում, և այստեղ այս ախտը երևան է գալիս նոյն իսկ այս քաղաքի սկզբնաւորութեան հետ:

Հռոմայեցի նշանաւոր պատմաբան Տիտոս Լիբիոսը Հռոմ քաղաքի հիմնադիրները՝ Հռոմուլոսի և Հրեստուսի մասին խօսելիս՝ ասում է, թէ նրանց մեծացրել է մի հասարակաց կին, որ իր ազահութեան համար կոչուել է Լուպա (գայլ). այդ պատճառով և հասարակաց տները Հռոմում կոչւում էին լուպինարիա:

Յետագայում Հռոմի ծաղկած ժամանակ ահագին թուով պոռնիկներ կային այնտեղ, մինչև անգամ մի վաճառանոց կար շինած, որտեղ հասարակաց տների համար կանայք էին ծախում: Այս վաճառանոցում նոյն իսկ տղամարդիկ հասարակաց տների համար ծախում էին իրանց կանանց, եթէ շնութեան մէջ բռնւում էին: Այստեղ նոյն նպատակով ծախւում էին նոյնպէս և ընկեցիկ երեխաներ և որբ աղջիկներ:

Սկզբում պոռնիկները բուն էին գրել Հռոմի որոշ տեղերում, բայց յետոյ շուտով բնակութիւն



հաստատեցին ամեն տեղ և մինչև անգամ տաճարներում:

Շատ տաճարներ և վեներա աստուածուհու նուիրած անառններ ծառայում էին իբրև տեսակցութեան տեղ ամուսնաթողների և սիրահարների համար:

Սիրահարների մէջ միջնորդ էին հանդիսանում քրմուհիները, որոնք տեսակցութիւններ էին սարքում, նամակներ էին տանում բերում և պարապում էին ամեն տեսակ մութ գործերով, որոնց նպատակն էր օգնել գայթակղիչին իր որսը ձեռք բերելու համար:

Վեներա աստուածուհին այն ժամանակուայ հաւատքով հովանաւորում էր ամեն տեսակ լիտի ծէսերի, որ նորա տաճարներում կատարում էին երկրպագուները և քրմերը:

Հռոմայեցոց մէջ ևս, ինչպէս յունաց մէջ, պոռնիկներն իրանց համար որոշուած առանձին հագուստով էին երևում հասարակութեան մէջ:

Տղամարդկանց զրաւելու համար նրանք շատ անգամ մի քանի գիտելիքներ էին ձեռք բերում, սովորում էին երաժշտութիւն, երգեցողութիւն և այլն:

Նրանք անգուրբում էին, շպարում էին, այսինքն կարմիր ու սպիտակ դեղերով ներկում էին երեսները. հոտաւէտ իւղեր էին քսում վրաները և ամեն կերպ աշխատում էին աւելի զրաւիչ կերպարանք ստանալ:

Հին Հռոմում հասարակաց կանայք ապրում

էին թէ մենակ և թէ հասարակաց տներում: Մենակ ապրողները փողոցներն ընկած՝ իրանց մօտ էին կանչում յաճախորդներին, կամ թէ իրանց տան դռներին նստած՝ սպասում էին, որ իրանց մօտ գան անցորդները:

Առանձնապէս շատ պոռնիկներ կային բաղնեպան կանանց մէջ: Հռոմայեցիները շատ սիրում էին բաղանիքներում լողանալ, և երկու սեռի մարդիկ լողանում էին միասին. տղամարդիկ լողացնում էին կանանց, իսկ կանայք տղամարդկանց: Այս պատճառով, բնականաբար, բոլոր բաղնեպան կանայք սովորաբար պոռնիկ էին լինում, և տղամարդիկ էլ բնաւ նրանցից յետ չէին մնում:

Հասարակաց տների տէրերը յաճախ շատ խիստ էին վարւում իրանց պոռնիկների հետ. որովհետև դրանք վաճառանոցներում գնուած ստրկուհիներ էին, և գնողները դրանց կատարեալ տէրերն էին:

Տէրերը առանձնապէս խիստ էին վարւում նրանց հետ, որոնք սիրով չէին պարապում իրանց արհեստով, եռանդով հիւրեր չէին զրաւում իրանց մօտ և քիչ էին խմեցնում նրանց: Բացի խիստ միջոցներից, տէրերն աշխատում էին երբեմն աղջիկներին իրանց պարապմունքը սիրելի դարձնել՝ խոստանալով, որ եթէ իրանց պարտականութիւնը լաւ կը կատարեն, շուտով ազատ կը թողնեն նրանց: Բայց այդ խոստումները սովորաբար միայն խոստումներ էլ մնում էին, և աղջկան արձակում էին միայն այն ժամանակ, երբ նա իր վարած



կեանքից և հիւանդութիւնից վաղաժամ պառաւում էր և այլ ևս այնպէս պէտք չէր գալիս իր արհեստի համար:

Հասարակաց տների պոռնիկները մէջ մըտնում էին երբեմն և ազատ, մինչև անգամ բարձր դիրքի և աստիճանի կանայք, ինչպէս օրինակ Մեսալինա կայսրուհին, որոնք այստեղ ցոփութեան և շուայտութեան մէջ ժամանակաւոր զուարճութիւն և վայելչութիւն էին անում և անձնատուր լինում ամեն մի պատահական յաճախորդի:

Շատ բարձրաստիճան մարդիկ չէին քաշուում և ամաշում հասարակաց տները այցելելուց:

Հոռոմում այսպիսի կանայք և տղամարդիկ շատ էին այն պատճառով, ի հարկէ, որ հասարակութեան բարքերը շատ ու շատ ընկած էին:

Եւ որովհետև ոչ մի զգուշութիւն չէին բանեցնում, որ չվարակուեն վեներական հիւանդութիւններով, ուստի և սիֆիլիսը շատ տարածուած էր Հռոմի քաղաքացիների մէջ:

Պոռնիկութիւնը Հռոմում, ընդհանրապէս, տարածուած էր ամեն տեղ, — տաճարներում, փողոցներում, թատրոններում և այլն: Հռոմայեցոց մէջ շատ անգամ տօները նպատակ ունէին իսկապէս բաւականութիւն տալ այս անառակութեանը: Տօնախմբութեան ժամանակ զոհ էին բերում մատղաշ խոջքորակներ, որին հետևում էին մի շարք վերին աստիճանի լկաի ծէսեր:

Կայսրութեան ժամանակ անառակութիւնն այն աստիճանի տարածուած էր, որ հռոմայեցի

պատմաբան Տակիտոսի ասելով՝ Հռոմում գրեթէ ոչ մի պատուաւոր աղջիկ չէր կարելի գտնել:

Բարքերի այս ապականութեանը շատ նպաստեցին և առաջին հինգ կայսրները, որոնց անսահման ախտամոլութիւնն և հեշտասիրութիւնը, սկսած Օգոստոսից, շարունակուում է և միւս կայսրների օրով, որ և կամաց կամաց զրկում է Հռոմը մաքրութեան և բարոյականութեան վերջին մնացորդներից:

Ամեն մի մեծ պատմական գիրք, որի մէջ նկարագրուած է հռոմայեցոց կայսրների կեանքը, ինչպէս օրինակ Տիբերիոսի, Կալիգուլայի, Ներոնի, Հելիոգաբալոսի և այլն, լի է այնքան կեղտոտութիւններով, որ մինչև անգամ մարդու զգուանք է գալիս նրանց մասին խօսք ասելու:

Բազմազան ազգերի Հռոմում համախմբուելը՝ իրանց հաւատալիքներով և անառակ պաշամուկներով, հռոմայեցոց ամեն տեսակ անամօթ ու լպիրշ կրօնական տօնախմբութիւնները, կայսերական իշխանութեան անչափ զօրանալը, կայսրների շուայտութիւնն ու ցոփութիւնն և միւս քաղաքացիների ամեն իրաւունքներն արհամարհելը, — այս ամենը այն հետևանքն առաջ բերին, որ Հռոմի բնակիչները, սկսած կայսերական պալատից մինչև յետին աղքատ խրճիթը, գրեթէ բոլորը ոտից զուլս թաղուած էին անառակութեան ցեխի մէջ և մինչև անգամ մոլութիւն ու արատ չէին համարում այդ ապականութիւնը:

Իժուար է երևակայել մի ազգի մէջ բարո-



յականութեան աւելի մեծ անկում: բայց և հէնց այդ է եղել միակ դիւսաւոր պատճառը, որ հօօր Հոռոմն ընկել է:

Ե.

Եկաւ Փրկիչն աշխարհ, և քրիստոնէութիւնն սկսեց տարածուել ապականութեան ազմում թաւալող ազգերի մէջ: Բնականաբար պէտք է այս նոր գօրութիւնը ահագին ազդեցութիւն թողնէր հասարակաց բարքերի փոփոխութեան վրայ:

Քանի որ հեթանոս հասարակութեան բարքերն այնքան ընկած էին, առաքեալները և նրանցից յետոյ եկեղեցու հայրերը ոչ մի բանի դէմ այնքան խիստ կռիւ չէին մղում, որքան անառակութեան և սեռական անժուժկալութեան դէմ, որ այն ժամանակ ընդարձակ չափերով ծաղկում էր ամեն երկիրներում:

Առաջին քրիստոնէաները հասարակութիւնից դուրս էին ձգում նրանց, որ բռնում էին իրանց անառակութեան մէջ. և ամեն մարդու համար միայն մի ամուսնութիւն ընդունելով իբրև բարոյականութիւն՝ եկեղեցու հայրերը մինչև անգամ թոյլ չէին տալիս, որ այրիները երկրորդ անգամ ամուսնանան:

Այս հասկացողութեան հետևանքն է, որ մեզանում քահանաներն իրաւունք չունեն նորից ամուսնանալու, և եթէ մի քահանայացուի կինը ձեռնադրութիւնից առաջ մեռնում է, քահանայացուն

ժողովուրդի բառով «պոռնիկ» է կոչւում և այլ ևս չի ձեռնադրուում:

Հետզհետէ քրիստոնէութեան զաղափարի հետ ազգերի մէջ սերտ կապւում է զաղափարական ողջախոնութեան հասկացողութիւնը սեռական կողմի նկատմամբ, և կրօնաւորներին այլ ևս թոյլ չի տրւում ամուսնանալ:

Բայց որքան աւելի է տարածւում քրիստոնէութիւնը, այնքան աւելի շուտով կորցնում է իր նախնական սրբութիւնը, և սկսում են մեզմ վերաբերուել դէպի մարդկային թուլութիւնը, քանի որ անհնար էր մի անգամից վերածնել մարդկային բնութիւնը:

Բացի այս՝ երևան են գալիս շատ աղանդներ, որոնք սխալ մեկնելով Սուրբ Գիրքը՝ իրանց անբարոյականութեամբ դժուար թէ բարձր լինէին հեթանոսներից:

Այսպէս, կրօնական պոռնկութիւն է ընդունուած եղել մի քանի աղանդների մէջ, որոնք քարոզում էին, թէ կանայք հասարակաց պիտի լինեն և այլն:

Ապա «Նիկոյայեան» աղանդը քարոզում էր, թէ ամօթ ասածը չկայ մարդ ու կնիկայ զուգաւորութեան մէջ և թէ բոլորը, նոյն իսկ ամենակոպիտ և ստոր կրքերն ու ախտերն օգտակար և սուրբ բաներ են: Քանի որ գիտութեան լոյսը չը կար, ամեն ինչ այսպէս շուռ տուած էին հասկանում և բանեցնում կեանքի մէջ:

Ճրանսիայում 1373 թուին մինչև անգամ



մի այնպիսի աղանդ կար, որ հագուստ էլ չէր ընդունում. և այդ աղանդին պատկանողներն աղամայ-մերկ ման էին գալիս և օրը ցերեկով ուրիշներն աչքի տուալ ամեն տեսակ պղծութիւններ կատարում սրա, նրա հետ:

Այսպիսով շուտով պոռնիկութիւնը բուն դրաւ կեանքի մէջ և միջին դարերում այնպէս ընդհանրացաւ քրիստոնեաների մէջ, ինչպէս որ հին աշխարհի հեթանոսների մէջ էր:

Ի դուր էին փորձում առաջին քրիստոնեայ կառավարիչները կռուել պոռնիկութեան դէմ. ի դուր եկեղեցական ժողովները կանոններ էին դնում անառակութեան դէմ: Այդ կռիւր բոլորովին ապարդիւն էր, ուստի և եկեղեցին կռիւր դադարեցնելով՝ սկսեց հոգ տանել միայն, որ կանոնաւորի պոռնիկութիւնը և միջոցներ ձեռք առնի նրա չափազանց վնասակար ազդեցութեան դէմ:

Բայց այս էլ պէտք է նկատել, որ ամեն տեղ այդպէս չէր: Միջին դարերի սկզբում գերման ազգերի մէջ, երբ դեռ չէին ծանօթացել յոյն-հռոմէական սովորութիւններին, ամենախիստ բարոյական կանոններ կային. կիներ նրանցում իր մարդու ընկերուհին էր միայն, և ոչ թէ նրա անասնական հաճոյքի կրաւորական առարկան:

Պատմութիւնից յայտնի է, որ հին գերմանները բարձր բարոյականութեան տէր էին, այնպէս որ նրանք էին գրեթէ միակ հեթանոս ժողովուրդը, որի կրօնը պոռնիկութիւն չէր ընդունում:

Հին գերմանները կնոջ մէջ տեսնում էին մի մեծ շնորհքով օժտուած և ազնիւ էակ. նրանք սովորութիւն ունէին կանանց դատաւոր կարգել իշխանների և ազնուական գերմանների հետ մի տեղ. և մինչև անգամ կանանց էին միջնորդ դատաւոր ընտրում թագաւորների և ազգերի մէջ: Բայց ժամանակի հետ այստեղ էլ բարքերն ապականուեցան և անառակութիւնը գնալով աւելի ու աւելի տարածուեցաւ:

Ապականութիւնը ժամանակով այնպիսի ահագին ծաւալ ստացաւ ժողովրդի մէջ, որ 805 թուին Կարլոս Մեծը ստիպուած էր օրէնք հրատարակել, որով արգելւում էին շնութիւն, ազգապղծութիւն և ուրիշ նման յանցանքներ, որ լինում էին ամուսնութեան վերաբերմամբ:

Իժբախտաբար մեծ կայսրը չկարողացաւ բարի օրինակ դառնալ իր հպատակների համար. նա մի կողմից բարոյականութեան օրէնք էր հրատարակում, միւս կողմից ինքը շրջապատուած սրիկաներով՝ անբարոյական կերպով էր ապրում:

Ունգեր պատմագիրն ասում է, թէ թագաւորներն այնքան արագ էին յաջորդում միմեանց, որ ժամանակ չէին ունենում իրանց տէրութեան բարոյականութեան և, ընդհանրապէս, ժողովրդի մասին մտածելու. ուստի և բնաւ հսկողութիւն չկար բարոյականութեան վրայ. և հետեանքն այն էր լինում, որ անառակութիւնը կարծես թէ այսպիսով քաջալերութիւն գտնելով իշխանու-



Թեան կողմից՝ սարսափելի կերպով տարածուած և արմատակալում էր ժողովրդի մէջ:

Այսպէս ուրեմն, միջին դարը բնաւ յետ չէր մնում հին դարից:

Ցաւալի է, որ միջին դարում ևս մեծ դեր էր խաղում հոգևորականութիւնը:

Կրօնաւորները «կուսակրօն» էին, այսինքն «կոյս» էին մնում. չէին ամուսնանում և կաթոլիկ եկեղեցու քահանաները, բայց միաժամանակ աճապին հարստութիւնների տէր դառնալով՝ դրանք իրանց համար ամբողջ հարեմներ, կանանոցներ էին պահում և շատ հասկանալի է, որ պէտք է աւելի ևս նպաստէին ժողովրդի ապականուելուն:

Այն ժամանակուայ գրքերը լի են քահանաների, կրօնաւորների ու կոյսերի մասին պատմուած հազար ու մի պիղծ բաներով. միջնադարեան կաթոլիկ վանքերը հօ կարծես թէ հասարակաց տներ լինէին, ուր այնպիսի անառակութիւններ էին կատարւում, որ յիշեցնում են Սոգոմ-Պոմորի պղծութիւնները: Հոգևորականութիւնը իսկի չէր քաշւում իր այս անառակութիւնից, այլ ընդհակառակն մինչև անգամ փառք ու պարծանք էր համարում իր համար:

Եւ այնտեղ, ասում է մի պատմագիր, այնտեղ, ուր պէտք է իսկապէս Քրիստոսի սուրբ վարդապետութիւնը առանձնապէս յարգուէր ու պաշտուէր, պոռնկութիւնն էր բուն դրել վանքի պատերի ներսում:

Տասնումէկերորդ դարում բանը այնտեղ հա-

սաւ, որ ամենամեծ բարոյականը համարւում էր այն քահանան, որ, կաթոլիկ եկեղեցու կանոնական կարգերով պարտաւորուած լինելով անկին մնալ, բաւականանում էր միայն մի կնոջով. իսկ հոգևորականների մեծ մասը շատ սիրականներ ունէին: Եւ դրա հետևանքն այն էր լինում, ասում է դոքտոր Գենէ-ամ-Ռին, որ երկիրը լրցուած էր հոգևորականների ապօրինի երեխաներով, որոնց անուանում էր ժողովուրդը «հոգևոր դասի ճետեր»:

Այսպէս, 12-րդ դարում մի եպիսկոպոս կարգալոյծ եղաւ, որովհետև վաթսուէն և հինգ զաւակ ունէր:

Եկեղեցու մի քանի ներկայացուցիչներ չէին քաշւում մինչև անգամ օգուտ քաղել պոռնկութիւնից, այսպէս, 14-րդ դարում Աւինիոնում, ուր նստում էին այն ժամանակ հոռոմայեցոց պապերը, տասնումէկ հասարակաց տներ կային պապի պալատի կողքին, և այդ պոռնկատներից մի քանիսի կառավարիչները կուսանոցների մայրապետներն էին. իսկ պապերը չէին ամաչում իրանց համար եկամուտ ստանալ այդ անառականոցներից:

Հոգևորականների ապականուած վարք ու բարքերին նմանում էին աշխարհականները՝ աշխատելով նրանցից էլ առաջ անցնել: Ոտի տակ էր արւում ամեն ինչ, որ սուրբ է և մարդկային. չորս կողմը թագաւորում էր միայն դարշելի կեդո ու անասանելի տիղմ: Ասած է. «Ինչ էրիկը՝ ինչ բերիկը, ինչ նախրչին՝ ինչ իր կնիկը». ինչ որ



եկեղեցու հովիւն էր, նոյնը և իր հօտը պիտի լինէր: Բայց «ժողովուրդը որ գժուի՝ դէպի տէր-  
աէրը կը գայ. աէրաէրը որ գժուի, դէպի սև կը գնայ»: «Կոյրը կոյրին որ առաջնորդի, եր-  
կուսն էլ մի խորխորատ կընկնեն»...

Ճիշտ է, միջին դարերում բարքերի անկումն ամեն չափ ու սահմանից անց էր կացել, նոյն իսկ բարբարոսական ժամանակներում էլ այդպիսի ապականութիւն չի եղել, — բայց և այնպէս այն ժամանակ դեռ ևս չկար օրէնքով ընդունուած և հաստատուած անառակութիւն:

Ընդհակառակն, անառակութիւնը ոչ միայն օրէնքով թոյլատրուած չէր տէրութեան մէջ, այլ և հալածուած ու պատժի էր ենթարկուած այս կամ այն օրէնսդրական միջոցներով: Առանձին ուշադրութիւն էին դարձնում մանաւանդ կաւատ-  
ների ու մարձակալների, միջնորդ տղամարդկանց ու կանանց վրայ, որոնց շատ երկրներում գա-  
նազան պատիժներ էին տալիս:

Այսպէս, Պարիզում կաւատներից որին ոգո-  
րածեծ էին անում, այսինքն, ճիպոտներով թա-  
կում էին, որին խարանում էին, այսինքն կարմ-  
բացրած երկաթով դաղում, կնիք էին դնում վրան, որ կոչւում էր աղուեսաղբօշմ, որին էլ ականջ-  
ները կտրում էին և կամ քաղաքից դուրս անում: Իսկ կաւատ կանանց շատ անգամ նստեցնում էին էջի վրայ, երեսները ետև դարձրած, մի տախտակի վրայ դրում էին յանցանքներն ու վզերից կա-  
խում և այսպէս ման էին ածում քաղաքը, թքում

մրում էին, լաւ թակում ջարդում, և վերջը, նա-  
յելով յանցանքներին, կամ քաղաքից դուրս էին անում, կամ բանտ դնում:

Անգլիայում այսպիսի խայտառակութեան ենթարկուած էին ոչ միայն կաւատութեամբ պա-  
րագող մարդիկը, այլ և հէնց իրանք անառակները:

Միայն այստեղ այդպիսիներին ոչ թէ էջի վրայ էին նստեցնում, այլ սայլի: Առաջից գնում էին երկու մարդ. մէկը ծնծղայ էր զարնում, իսկ միւսը բարձրաձայն յայտնում էր սայլի վրայ նստածների յանցանքը: Ետևից հաւաքւում էր անագին բազմութեամբ խառնիճաղանձ ամբոխը. սուլում, հայհոյում էին յանցաւորներին, ծաղրում խայտառակում էին և ցեխ ու ամեն տեսակ ա-  
պականութիւն շարտում երեսներին:

ժրնետում մահուան էին դատապարտում այն ամեն հոգաբարձուները, որոնց պահած աղ-  
ջիկները անառակ էին դուրս գալիս. իսկ անա-  
ռակութեամբ պարագողներին լաւ ծեծում էին և ընդ միշտ քշում քաղաքից. վերադարձողների պատիժը մահ էր:

Նէապօլում, Սպանիայում և Պորտուգալիա-  
յում կաւատների և պոռնիկիների քիթն էին կրտ-  
րում. իսկ մի քանի ուրիշ երկրներում և քաղաք-  
ներում, եթէ տանտէրը թողնում էր, որ իր տանը հասարակաց կանայք ապրեն, տունը յար-  
քունիս էին գրաւում:

Բայց չնայելով այս ամեն խստութիւններին՝ ամբողջ արևմտեան Եւրոպայում ժողովրդի մէջ



ծաղկած և շատ տարածուած էր անառակութիւնը. սաստիկ զօրացած էր մանաւանդ 15-րդ և 16-րդ դարերում, երբ տէրութիւնները աւերում էին պատերազմներով և ներքին կռիւներով:

Յաղթողները յաղթուածներին իրանց ստրուկներն էին համարում. ձեռներից խլում էին ստացուածքները. նրանց կիներն ու աղջիկը բռնաբարում էին և հարձ դարձնում:

Այս պատերազմների հետևանքը լինում էր սարսափելի աղքատութիւն: Այս կամ այն երկրում թափառում էին ահագին խմբերով կանայք, բաղջած, անտուն — անտեղ, առանց ճար ու ճարակի, և չունենալով ոչ ապրուստի միջոց, ոչ ձեռքի աշխատանք կամ ապաստանարան, մեծ մասամբ կազմում էին պոռնիկների ամբողջ բանակներ և ապականում, քայքայում էին ժողովրդի վարք ու բարքը: Մասամբ այս զժբախտները կազմակերպում էին նաև յանցագործների ընկերութիւններ և գողութիւն ու ամեն տեսակ խայտառակ անկարգութիւններ և նոյն իսկ քստմնելի մարդասպանութիւններ անում:

2.

Լուգովիկոս իններորդը երբ դահ բարձրացաւ, պոռնիկութիւնը համարում էր հասարակութեան մի աննօրմալ երևոյթ, բայց և այնպէս չէր վճռում մի անգամից դադարեցնել պոռնիկութեան պաշտօնական գոյութիւնը Փրանսիայում, որով-

հետև չնայելով այս պարապմունքի դէմ գործ դրած դաժան պատուհասին, երբէք Փրանսիացոյ թագաւորութեան մէջ այնքան շատ թեթևաբարոյ կանայք չէին եղել, որքան 13-րդ դարու սկզբում:

Այս թագաւորը կարծում էր, թէ հասարակութեան մէջից պոռնիկութիւնը եթէ չվերացնել, գոնէ կարող է խիստ պակասեցնել կրօնական միջոցներով և բարեգործութիւններով. և այս սպասելի էր մանաւանդ՝ ի նկատի ունենալով այն կրօնական ջերմեռանդութիւնը, որով բռնուած էր այն ժամանակ Եւրոպան շնորհիւ խաչակրաց արշաւանքներին:

Բայց Լուգովիկոս իններորդի յոյսերը չարգարացան, մանաւանդ որ խաչակրաց արշաւանքները, նոյն իսկ, աւելի ևս ապականեցին հասարակութիւնը: Սաչակիրները իրանց հայրենիք վերադառնալով՝ մահմեդականներից մի նոր բան էին սովորել. նրանք էլ սկսեցին մահմեդականների պէս հարեմներ պահել և այդ հարեմները լցնել Ասիայի վաճառանոցներում ձեռք բերած ու գնած ստրկուհիներով:

Լուգովիկոս իններորդը երբ վերադարձաւ Սուրբ Երկրից, ապշած մնաց տեսնելով բարոյականութեան անկումն իր թագաւորութեան մէջ. նա, ցանկանալով ընդ միշտ վերջացնել պոռնիկութիւնը, 1254 թուին հրաման արձակեց, որով այս պարապմունքն և իր բոլոր տեսակները ընդ միշտ արգելւում էին Փրանսիայում:

Այս հրամանը երբ յայտարարուեց, պոռնիկ-



ներն իրանց որոշ բնակութեան տեղերից գրուեցան զանազան կողմեր և սկսեցին այս կամ այն պարապմունքի տակ ծածկել իրանց արհեստը:

Ճիշտ է, առ ժամանակ անառակութիւնն անհետացաւ այն տեղերից, ուր կար մինչ այդ այս կամ այն կերպ ոստիկանութեան հսկողութեան տակ, բայց ապականութեան տղմասիկ հոսանքը սկսեց հեղեղել ամբողջ Պարիզ քաղաքը, պետութիւնը, քաղաքներ ու գիւղեր, շէնքեր ու աւաններ: Անառակութիւնը գործում էր պոռնիկների պարկեշտ, բայց շինծու, պարապմունքների գիմակի տակ:

Պոռնիկներն երևան եկան փողոցներում՝ քօղն երեսներին, եկեղեցում՝ ազօթելու «վարդարանը» ձեռներին, և առաջուայ պէս մատչելի էին ամեն մարդու համար, ով կարող էր միայն կարգին կանանցից ջուկել նրանց:

Պարկեշտ կանանց գիմակի տակ նրանք բնակւում էին ամեն տեղ, քաղաքի կենտրոնում, մասնաւոր մարդկանց տներում, և մինչև անգամ բանն այն տեղ էր հասնում, որ սուտ ապաշխարողի անուան տակ մտնում էին վանքերը՝ մտալով իսկապէս միևնոյն պոռնիկները, ինչ որ էին:

Ասել չի ուզիլ, որ ժողովրդի բարոյականութիւնը այսպիսով աւելի ևս վատացաւ և անառակութիւնն էլ աւելի տարածուեցաւ:

Այժմ միայն հասկանալի եղաւ, որ ոստիկանութեան հսկողութեան տակ գտնուած աշկարայ անառակութիւնը շատ աւելի պակաս վտանգաւոր

է, քան ծածուկը. այժմ միայն համոզուեցան, որ հսկողութիւնը վերացնելով՝ անառակութիւնը չի նուազում, այլ ընդհակառակն աւելի արագ է աճում, և ժողովրդի բարոյականութիւնն ընկնում է: Փորձելով անառակութիւնը ոչնչացնել, միայն աւելի զօրացրին այն, որպէս զի նոր ու ահազին ուժերով արձակ համարձակ տարածուի ամեն տեղ և պատուաւոր կանանց գիմակի տակ ներս սողոսկի նոյն իսկ այն տեղ, ուր առաջ երբէք մուտք չունէր և ուր շուտով շատ նոր գոհեր պիտի գտնէր իր համար:

Այս պատճառով Լուզովիկոս թագաւորը կարճ ժամանակից յետոյ փոխեց իր հրամանը և դարբեալ օրէնքով ընդունեց անառակութեան արհեստը Ֆրանսիայում. բայց հասարակութեանն այս էլ շատ քիչ օգուտ բերեց:

Լուզովիկոսի մահից յետոյ յաջորդ. թագաւորը դարձեալ փոխեց անառակութեան արհեստի բոլոր օրէնքները. նրա զօրավարներից մէկը մինչև անգամ հրամայեց ջուրը լցնել, խեղդել այն բոլոր հասարակաց կանանց, որոնք ապրում էին զօրատեղիների մօտերը. և այդպիսի կանայք ութ հարիւրից աւելի դուրս եկան:

Քանի որ հասարակաց տները փակուած էին ամբողջ Ֆրանսիայում, նրանց մէջ ապրող պոռնիկները՝ ոստիկանութեան ձեռքն ընկնելուց խուսափելով և ապրուստի մի դուռ բանալու համար՝ ընկերացան գողերի հետ և կազմեցին իրանց հա-



մար ծածուկ ապաստանի որջեր, ուր ամեն տեսակ սարսափելի յանցանքներ էին գործում:

Անառակութիւնը թագաւորում էր ոչ միայն քաղաքներում, այլ և գիւղերում, գօրքերի մէջ և նոյն իսկ պալատներում:

Միջնադարի վերջերը գօրքի ետեւից գնում էին հասարակաց կանայք մեծամեծ գնդերով, և այս ոչ միայն Ծրանսիայում, այլ և Արեւմտեան Եւրոպայի միւս տէրութիւնների մէջ:

Է.

Կասկած չկայ, որ այդ ժամանակ վեներական ախտերն ու սիֆիլիսը ծագկում ու բարգաւաճում էին ժողովրդի մէջ. ցոփ ու դեղծ բարքերի հեռանքն էր, որ հսկայական չափերով տարածւում էին այս հիւանդութիւնները: Կարլոս տասներորդ թագաւորը ստիպուած եղաւ օրէնքով ընդունուած անառակութիւնը ոչնչացնելու համար մի նոր կարգադրութիւն անել, և նա կարծում էր թէ այս կերպով կարո՞ղ է սիֆիլիսի տարածուելու առաջն անել...

Հասկանալի է, որ այդ կարգադրութիւնից էլ ոչ մի լաւ բան դուրս չեկաւ, և թաքուն անառակութիւնը դարձեալ ծագկում էր ամեն փողոցներում և տներում, պոռնիկները հրապարակով երևում էին ամեն տեղ և շարունակում էին իրանց արհեստը, թէպէտ ոչ պաշտօնապէս, բայց բաւական աշկարայ:

Կառավարութիւնը ուզում էր վեներական հիւանդութիւններն և սիֆիլիսը ոչնչացնել հասարակաց տները փակելով, բայց դրանով հէնց հասարակութեան մէջ բնակեցրեց վարակուած հասարակաց կանանց, որոնք այսպիսի հանգամանքներում, ի հարկէ, աւելի հեշտ և շատ էին տարածում վարակը:

Գաղտնի անառականոցների թիւը զգալի կերպով մեծացաւ. երևան եկան կաւատների և մարձակալների ահագին խմբեր, որոնք շատ պէտք էին հասարակութեան համար, որովհետև նոյն իսկ իրանց բնակարաններում տեսակցութիւններ էին սարքում անառակողների համար:

Այսպիսով՝ թոյլատրուած և իշխանութեան հսկողութեան տակ գտնուած հասարակաց տների տեղը բռնեցին մի և նոյն անառականոցները, միայն այնպիսի ստոր ու ցած մարդկանց ձեռքի տակ, որոնք ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում օրէնքներին, ճիշտ ասած՝ գիտէին միշտ ճարպիկութեամբ խոյս տալ օրէնքից: Պարզ է, որ վեներական ախտերը աւելի ևս պիտի տարածուէին և գոհերի թիւն աւելի պիտի մեծանար...

Կասկած չկայ, որ էլ հասկացողութիւն չէր կարող լինել ամօթ ու պատկառանքի համար:

Շատ անգամ աղջկերք ու տղայք իրանց կեանքի առաջին օրերից սկսած միասին մի տեղ ծառայում էին անառակութեան համար և ապականութեան տղմի մէջ թաթախուած՝ այլ ևս իրանց օրումը չէին դուրս գալիս այդ ցեխի մի-



Ղից: Այնտեղ, անառականոցներում, սկսում էր նրանց կեանքի առաջին օրը, այնտեղ և վաղաժամ ծերանում էին նրանք, վաղաժամ, քանի որ անառակութիւնն ու սիֆիլիսը և նրանց ընկեր՝ ոգելից խմիչքները խիստ շուտ են սպանում մարդուս:

Հասարակաց տները, նայելով թէ ում ձեռքին էր լինում տէրութեան զեկը, մէկ փակում էին, մէկ բացում. բայց անառակութիւնն ամեն տեղ և միշտ տարածում էր ու տարածում:

1495 թուին Նէապոլի պաշարման ժամանակ կարլոս ութերորդի զօրքերի մէջ սարսափելի կերպով տարածուած էր սիֆիլիսի համաճարակը:

Զօրքի ետևից գնացող պոռնիկ կանանց համարելով այս համաճարակի պատճառ՝ առանձին ուշադրութիւն դարձրին նրանց վրայ և մանաւանդ հասարակաց տների վրայ, կարծելով թէ այստեղ է վարակի գլխաւոր բոյնը: Այդ պատճառով ամեն տեղ փակեցին նման հաստատութիւնները և միաժամանակ շատ քաղաքներում և տէրութիւնների մէջ դարձեալ հալածանք սկսեցին պոռնիկութեան դէմ: Օրինակ, պոռնիկներին հեռացնում էին եկեղեցիներին մօտիկ փողոցներից և բնակեցնում էին քաղաքի խուլ ու հեռաւոր մասերում. մի քանի քաղաքներում եթէ հաստատում էր, թէ մի կին անառակութեամբ է պարապում և երկրորդ անգամ էլի բռնւում էր նոյն բանի մէջ, քիթը կտրում էին, ծեծում էին, ինչպէս վերևում ասացինք:

Հասարակաց տներ այցելող մարդկանց ձեռքն էին կտրում և զրկում ամեն ստացուածքից: Իսկ այսպիսի հաստատութիւններ պահողներին օրէնքից դուրս էին հրատարակում. մի քանի դերմանական քաղաքներում պոռնիկներին ուղղակի ջուրն էին ձգում, իսկ Անգլիայում այդպիսիներին զրկում էին քրիստոնէական թաղումից:

Կրկնում ենք, որ այս ամենով հասարակական բարքերը բնաւ չէին լաւանում, այլ ընդհակառակն մինչև անգամ աւելի ևս վատանում էին, և պաշտօնապէս փակուած հասարակաց տների տեղ բռնւում էին հազար ու մի գաղտնի ապականութեան որջեր, ուր սարսափելի կերպով ճարակում էր սիֆիլիսը և այն տեղից մտնում էր ժողովրդի մէջ:

Պէտք է նկատել, որ, դռքտոր Գիննէ-ան-Ռինի ասելով, քանի որ հասարակաց տներ կային՝ մինչև նրանց փակուելը՝ երեխայ սպանելը գրեթէ բոլորովին անձանօթ բան էր. բայց այդ տները որ փակուեցին, քիչ չէր պատահում մանկասպանութիւն և տարէցտարի զնալով աճում էր:

Այս ի նկատի ունենալով, ինչպէս և սիֆիլիսի տարածուելու զարգացումը տեսնելով, շատ քաղաքներում բաց են անում ընկեցիկ երեխաների համար ապաստարաններ և կրթարաններ, իսկ սիֆիլիսաւորներին համար բուժարաններ:

Սիֆիլիսն այդ ժամանակ այնքան սառտիկ տարածուած էր, որ այս հիւանդութեան վրայ



նայում էին, իբրև մի անխուսափելի չարիքի, թէպէտ և երբեմն այդ վերջին ժամանակներում ևս, օրինակ, 16-րդ դարում, օրէնքներ և խրատիչ պատիժներ կային անառակութեան և սիֆիլիսի համար:

Այսպէս, Անգլիայում եթէ կինը մարդուն անհաւատարիմ էր գտնուում, և կամ մարդը իր կնոջից սիֆիլիս էր ստանում, մարդն իրաւունք ունէր կնոջը՝ վիզը պարան դրած՝ բերել վաճառանոց և այնտեղ ծախել իբրև ստրուկ: Իսկ եթէ կինն էր մարդուց վարակւում սիֆիլիսով, այս մասին լուծւում է պոռնկութեան պատմութիւնը... Ահա՛ բացայայտ անարդարութիւն:

1520 թուին արդէն Սպանիայում, ուր հասարակաց տներն այդ ժամանակ կառավարութեան ձեռքի տակ էին, բժշկական քննութիւն մտցրին պոռնիկների վրայ: Բայց 1696 թուին թոյլատրուած հասարակաց տների գոյութեանը չհամակրող մարդիկն և եզուիտները յաջողեցրին Սպանիայում ամեն տեղ փակել տալ հասարակաց տները, որի հետևանքը դարձեալ այն եղաւ, որ գաղտնի պոռնկութիւնն ու սիֆիլիսը զարգացան, և այս բանը կարգի բերելու համար հարկ եղաւ դարձեալ բանալ թոյլատրուած հասարակաց տներ:

Միևնոյնը եղաւ և Գերմանիայում: Պրուսացոց տէրութիւնն ևս 1700 թուին հարկադրուեցաւ թոյլ տալ, որ գոյութիւն ունենան հասարակաց տներ, միայն առանձին կարգ ու կանոններով և պոռնիկների առողջութիւնը խիստ հսկո-

ղութեան և բժշկական քննութեան տակ դնելով:

Այսպէս, 17-րդ դարում շատ անբարութիւնները մէջ նորից միջնադարեան թոյլատուութեան դարձան և վերջապէս բոլորովին այժմեան ժամանակի կանոնադրութեան անցան:

Կարելի է դեռ ուրիշ շատ յիշատակութիւններ էլ բերել, թէ ինչպէս այս կամ այն ազգի մէջ փակւում ու նորից բացւում են թոյլատրուած հասարակաց տները, բայց այսքանից էլ շատ լաւ երևում է, որ անհիմն է այն ենթադրութիւնը, թէ հասարակաց տները փակելով պոռնկութիւնը կը պակասի: Ընդհակառակն պոռնկութիւնն այդ դէպքում ամեն անգամ աւելի զօրացել է. ուստի և պոռնկութեան պատճառը պէտք է ուրիշ տեղ փնտռել: Այս մասին ներքևում կը խօսենք:

Ը.

Ի՞նչպէս է եղել պոռնկութիւնը Ռուսաստանում:

Ռուսաց հին տարեգիրները չեն յիշատակում, թէ Ռուսաստանում պոռնկութիւնը գոյութիւն ունեցած լինի, իբրև հասարակական կեանքի մի առանձին երևոյթ, թէպէտ յիշուում է, որ իշխաններից մէկը, Սուրբ Վլադիմիրը, մկրտուելուց առաջ հարեմ էր պահում, որի մէջ հարիւրաւոր հարձեր կային:

Կարելի է, ասում է մի բժիշկ, հին Ռուսաստանում իսկական պոռնկութիւն նրա համար



չի եղել, որ ուսու կանանց կեանքն այն ժամանակ այնպէս է եղել, որ չէր կարող պոռնկութիւն առաջ բերել: Հին ժամանակ ուսու նշանաւոր կանայք, բոյարունիները, միշտ փակուած մնում էին իրանց բարձր քոչկերում՝ շրջապատուած սպասաւորներով: Եւ ոչ միայն աղջկերքը, այլ և ամուսնացած կանայք նոյն իսկ իրանց ուրախութիւնները և խնջոյքները ժամանակ տղամարդկանց հետ մի տեղ չէին լինում. տղամարդի երես նրանք եկեղեցումն էին տեսնում:

Եւ այսպէս առանձնութեան մէջ անց էր կենում նշանաւոր ուսու կանանց գրեթէ ամբողջ կեանքը, սկզբում, աղջիկ ժամանակը, հօր իշխանութեան տակ, իսկ յետոյ՝ մարդու:

Եւ նրանց կեանքն անցնում էր մի այնպիսի խիստ շրջապատի մէջ, որի համար բոունցքի դատաստանը մի ընդհանուր երևոյթ էր. այս պատճառով և կանայքը մեռածի նման հնազանդուում էին իրանց ճակատագրին. իրանց ժամանակը սպանում էին ուտել-խմելով, քնով և ակնածութեամբ դողալով «իրա», այսինքն տան տղամարդու ահաւոր իշխանութեան առաջ:

Այսպիսի պայմաններում գժուար թէ այն ժամանակուայ հասարակութեան բարձր դասակարգերի մէջ երևան գար և գոյութիւն ունենար պոռնկութիւնը. բայց գաղտնի անառակութիւն, ի հարկէ, կար մինչև անգամ բոյարները տներում, այն էլ բաւական շատ տարածուած, շնորհիւ նոյն

իսկ այն աննորմալ ամուսնութեան, որ լինում էր հին Ռուսաստանում:

Այն ժամանակ (ինչպէս և այժմ շատ գիւղերում) հարս ու փեսայի ծնողներն էին պսակում նրանց, շատ անգամ նոյն իսկ առանց նրանց կամքը հարցնելու: Յաճախ հարսն իր ապագայ մարդուն առաջին անգամ միայն եկեղեցում պսակի ժամանակ էր տեսնում:

Ծնողների հրամանով և ոչ թէ իրանց ցանկութեամբ ամուսնացած մարդ ու կինը, ի հարկէ, շատ յաճախ չէին սիրում իրար և եթէ միասին ապրում էին, միայն նրա համար, որ ստիպուած էին այդ անել, կամ անկարող էին եղածը փոխել:

Ամուսնութիւնն այսպիսով դառնում էր մի պատահական կապ տիրոջ և իր աղախնի մէջ, ուստի և կիսն ատում էր իրան ճնշողին և միանգամայն վախենում նրանից:

Յաճախ, իր չսիրած ու հաստագլուխ մարդու հետ ամուսնացած կինը, չարչարուելով իր բռնակալ ամուսնու ձեռքին, շուտով զայրացկոտ ու դիւրագրգիռ էր դառնում և միշտ դժգոհ մնալով իր շրջապատից, կամ մի կերպ մենակ քաշ էր տալիս իր գգուելի կեանքը, կամ որ աւելի վատ է, սէր էր անում ծառայի կամ տանու մարդկանցից մէկն ու մէկի հետ:

Մարդիկն էլ իրանց կարգին այսպիսի ամուսնութեան պատճառով փախչում էին իրանց անդիւր կանանցից և իրանց կրքերին յագուրդ էին տալիս անից դուրս, թէկուզ ստորին դասակարգի



կանանց մէջ, ուր խորին տգիտութեան և աղքատութեան պատճառով յաճախ խիստ տարածուած էր լինում անբարոյականութիւնը:

Հասարակական կարծիքն այն ժամանակ շատ մեղմ աչքով էր նայում, եթէ որևէ բոյսը տնից դուրս կողմնակի կապ էր հաստատում իր դասակարգին չպատկանող մի այրի կնոջ կամ աղջկայ հետ. ուստի հարուստների որդիքը շատ հեշտութեամբ էին ձեռք ձգում ռամիկ կանանց, մանաւանդ որ ռամիկ ժողովրդի կանանց վրայ ընդհանրապէս նայում էին ինչպէս մի իրեղէնի, աժանագին ապրանքի վրայ...

Անբարոյականութիւնն այն ժամանակ ընդհանրապէս խիստ տարածուած էր ժողովրդի մէջ, և Մոսկուայում խիստ մեծ չափերով գոյութիւն ունէր պոռնիկութիւն ու շնութիւն, ինչպէս գրում է Կրիժանիչը, որ իր յիշատակարանի մէջ այն ժամանակուայ Ռուստոտանը շատ աւելի անառակ ու փչացած է գտնում, քան Թիւրքիան: Ընդհանրապէս այն ժամանակուայ բոլոր օտարագրիներն ևս ասում են, թէ Ռուսաստանում անառակութիւնը չափ ու սահման չունէր:

Ոչ ոք այնքան նեղութիւն չի տուել ուսու կանանց, ինչպէս Յովհաննէս Ահարկու թագաւորն ու իր մարտակիցները, որոնք այնպիսի բաներ էին անում, որ այժմ անհաւանական ու անհաւատալի են թւում: Առևանգել ամեն պատահած կնկայ, անմեղ աղջկերք բռնաբարել, այդ նրանց

համար շատ սովորական բան էր: Պատմութիւնը լի է այդպիսի բաներով:

Գրեթէ ամենօրեայ երևոյթներ էին սոսկալի, յաճախ արիւնահեղ անառակ կերուխումներն ու լիտի շուայտութիւնները, որոնց նկարագիրներն այնքան անհաւատալի են, որ կարծես թէ առասպելական բաներ լինեն: Եւ բանն այն է, որ անառակութիւնը որևէ վայելուչ բանի կերպարանքի տակ թաքուն չէր լինում, այլ աշկարայ կերպով այնպէս էին անում, որ ամենքն էլ տեսնեն:

Անառակութիւնը միայն այն չէր, որ այդ մարդիկը զօրով բռնում բռնաբարում էին կանանց, այլ և այն, որ պոռնիկութիւնը տարածուել ու մտել էր ամեն տեղ: Աղքատների համար անառակութեան տեղ էին օղեաները ու բաղանիքները, իսկ հարուստ մարդիկ հազարաւոր կաւատների միջոցով էին ձեռք ձգում կանանց:

Հայրերը ծախում էին իրանց աղջկերանց, իսկ մարդիկն՝ իրանց կանանց...

Մանկամարդ այրիները շատ անգամ մեծ ճանապարհի վրայ որևէ խանում անառականոց էին բաց անում, կամ թէ չէ հէնց քաղաքում պահում էին օղեաներ ու ճաշարաններ, ուր կային, ի հարկէ, և պոռնիկներ:

Անառակութիւնն այդ ժամանակ իր դրոշմը դրել է հասարակական կեանքի ամեն կողմերի վրայ. խող, երգ, պար ու զանազան տեսակի ուրախութիւններ, ամեն ինչ շատ թէ քիչ ապա-



կանուած բովանդակութիւն և կերպարանք են ստացել:

17-րդ դարում Ֆիլարետ պատրիարքը կըշտամբում էր բոլոր ժողովրդին, թէ շատերը հեռու տեղ ծառայութեան գնալիս՝ շատ անգամ իրանց կանանց գրաւ էին դնում ընկերների մօտ և պարտք առած փողի շահի տեղ՝ իրաւունք էին տալիս օգտուել իրանց կանանցից:

Եթէ պարտապանը ժամանակին իր կնոջը չթափէր պարտաիրոջ ձեռքից, վերջինս նրա կնոջը ուրիշին էր ծախում անառակութեան նպատակով, սա էլ մի երրորդին և այլն:

Պետրիի ասելով՝ ոռուսաց ընտանեկան կեանքի մէջ մի հետաքրքիր երևոյթ կար. այն է՝ եթէ մարդը կնոջից ձանձրանում էր, ժամանակաւոր կերպով ուրիշին էր տալիս նրան և յետոյ կարող էր այլ ևս իր մօտ յետ չընդունել իբրև իր կինը: Այդ ժամանակ կնոջը կռուսանաց վանք էին մտցնում, իսկ մարդը նորից կարող էր ամուսնանալ ուրիշ կնոջ հետ:

Հարսանիքների ժամանակ, սովորաբար, այնքան շատ էին խմում, որ տղամարդիկ հարբում, խելքները կորցնում էին, և այդպէս անզգայութեան հասած՝ այլ ևս չէին կարողանում աչքներն իրանց կանանց վրայ պահել: Կանայք էլ օգտուելով այս ազատութիւնից՝ գրեթէ ամբողջ կարայ անառակութիւն էին անում: Մեծ տօների ժամանակ հօ փողոցներում թրև էին գալիս հարբած կիսամերկ պոռնիկները...

ԴՐ.

Մեծն Պետրոսի օրով, երբ ոռուսները սկսեցին Արևմտեան Եւրոպայի տէրութիւնները հետ առևտրական յարաբերութիւն ունենալ, Ռուսաստանում ևս սկսեցին պոռնկութեան վրայ նայել իբրև մի արհեստի, և այսպիսի պոռնկութիւնը հետզհետէ տարածուելով ժողովրդի մէջ՝ բաւականի վայր ձգեց բարոյականութիւնը հասարակութեան բոլոր խաւերի մէջ:

Մի ոռուս պատմագիր բժիշկ ասում է, թէ պէտք է կարծել, որ պոռնկութիւնը ծագում է առել (մեզ թւում է, թէ լաւ կլինի ասել՝ ուշագրութիւն է գրաւել) այն օտարազգիներից, որոնք գալիս բնակւում էին Ռուսաստանում, բայց չէին ցանկանում ձեռք քաշել իրանց հայրենիքում բանեցրած արտաւոր սովորութիւններից: Դրանք են եղել, որ Ռուսաստանում ևս իրանց երկրի ձևով պոռնկութիւն են մտցրել: Դրանցից ապա պոռնկութիւնը անցել է ոռուս հասարակութեանը:

Կատարեալ ազատութիւնն ևս, ուրեմն, երբեմն իր վատ կողմերն ունի:

Պոռնկութիւնն այնուհետև մտել էր նաև վանքերի և կռուսանոցների խուցերը: Շատ անգամ վանքերն ուխտ էին գալիս աշխարհականներ, գիշերն այնտեղ լացերում էին քնում և այս անուան տակ անառակութիւններ էին անում, այնպէս որ վիճակային կառավարութիւնները ստի-



պուլաժ էին մի շարք իրաւացի կարգադրութիւններ անել այս մասին, թէպէտե կրօնաւորներն ու կոյսերն այն ժամանակ յաճախ իրանց կամքի հակառակ էին վանք ընկնում, ուստի և չէին ուզում վանական կեանքի խստութեան ենթարկուել:

Թէպէտե այն ժամանակ արդէն պոռնկութիւնն ու անառակութիւնը Արեւմուտքի բոլոր նրբացած ձեւերով կար Ռուսաստանում, բայց և այնպէս դեռ ևս կառավարութեան կողմից օրինադրուած չէր, այլ, ընդհակառակն, օրէնքը մինչև անգամ մի շարք պատժական միջոցներով հալածում էր պոռնկութիւնը:

Այսպէս, 17-րդ և 18-րդ դարերում օրէնքով որոշուած էր ռոզգի տալ, այսինքն ճիպտաներով ձեծել պոռնիկ կանանց ու իրանց գայթակղիչներին, մանաւանդ եթէ ապօրինի զաւակ էր ծնուած լինում: Եթէ պոռնիկ կինը չէր իմանում, թէ ո՞վ է իր գայթակղիչը, կամ չէր ուզում նրա անունը տալ, այն ժամանակ ինքը կրկնակի էր ենթարկւում նոյն պատժին, թէ իր և թէ նրա տեղ: Ծեծից յետոյ յանցաւորին փակում էին վանքի մէջ:

Մինչև անգամ մի խուզարկու բաժանմունք կար, կազմուած այդպիսի գործերին հետևելու համար:

Պետերբուրգում տեղ տեղ կային մինչև անգամ իսկական հասարակաց տներ, երբեմն յայտնի, երբեմն ծածուկ. բայց աւելի ծաղկած էր մենակ ապրող կանանց պոռնկութիւնը, ուստի և կառավարութիւնը մի շարք միջոցներ է ձեռք

առնում անառակութիւնն արմատախիլ անելու համար:

Այս պատճառով շատ հասարակաց կանանց բռնում, բանտն էին դնում. բայց և այնպէս, պոռնկութիւնը քանի դնում աճում է և կատարինէ երկրորդի ժամանակ սկսում է սաստիկ ազդել ժողովրդի բարոյականութեան և առողջութեան վրայ:

Չնայելով պատժական միջոցներին ու օրէնքներին՝ ապօրինի երեխաների, ընկեցիկների և մանկասպանութիւնների թիւը շարունակ աճում էր:

Ահաւոր՝ պոռնկութիւնն ու աճող սիֆիլիսը հնար եղածի չափ պակասեցնելու համար՝ կարգադրում է բոլոր՝ վեներական հիւանդութիւններով վարակուած կանանց բռնել, բժշկել և Սիբիր արքորել: Աւելի խիստ պատժում էին կաւատներին. իսկ անառականոցներ պահողներին, և մինչև անգամ դրանց յաճախորդներին, տուգանք առնելով, բանտ էին դնում:

Կատարինէ երկրորդը շուտով այնուհետև համոզուեց, որ այս բոլոր միջոցներն իսկապէս գրեթէ անօգուտ էին, ուստի և խստութիւնները մեղմացնելով՝ թոյլ տուաւ, որ լինեն օրինական պոռնիկներ, միայն պարբերական բժշկական հրակողութեան տակ:

Այս իմաստուն կայսրուհուց յետոյ պոռնկութիւնը նորից հալածանքի ենթարկուեց և դարձեալ թոյլատրուեց 19-րդ դարու կէսին ու



դրոնեց բժշկական ու ստիկանական հսկողութեան տակ:

Ռուսաստանում եղել են պոռնիկութեան այն բոլոր տեսակները, որ տեսանք ուրիշ ազգերի մէջ. այսինքն՝ հիւրասիրական, կրօնական և քաղաքացիական:

Հիւրասիրական պոռնիկութիւնը Ռուսաստանում առանձնապէս աչքի էր ընկնում ճորտական իրաւունքի ժամանակ, երբ մի քանի կալուածատէրեր իրանց հարեաններին հիւրասիրում էին իրանց մօտ և շատ անգամ, ի պատիւ իրանց հիւրերի, անասելի ցօփ շուայտութիւններ էին սարքում:

Կրօնական պոռնիկութեան մի երևոյթ կայ մինչև այժմ էլ, ինչպէս հաստատում են, «խլիստ» կոչուած աղանդաւորների մէջ. կանայք ու տղամարդիկ ծածուկ հաւաքւում են մի ներքնատան մէջ և կրօնական յափշտակութեան մէջ սկսում են իրանք իրանց ճիպտաներով ծեծել, որից և նրանց «խլիստ», ճիպտ, կոչումը: Վերջը սկսում են իրար հետ խառնակուել ու ազգապղծութիւն անել...

Քաղաքացիական պոռնիկութիւնը Ռուսաստանում երևան է գալիս երկու կերպ. մէկ պոռնիկները յայտնի ու ցուցակագրուած են, որոնց թիւը սակայն այնքան էլ շատ չէ. մէկ էլ գաղտնի: Վերջինների թիւը հաւանօրէն այստեղ էլ չափազանց շատ պիտի լինի, ինչպէս որ է ուրիշ տէրութիւնների մէջ:

Ուրիշ տեսակ պոռնիկութիւններ էլ կան. օրինակ՝ Ռուսաստանի մի քանի կողմերում, գիւղերում շատ սովորական բան է համարւում, եթէ մարդու չգնացած աղջիկը երկուսուգիս է դառնում: Այսպիսի յղութիւնը շատ տեղ իսկի ամօթ ու խայտառակութիւն էլ չի համարւում, այլ ընդհակառակն մինչև անգամ պատիւ և պարծանք է, որովհետև աղջիկը գործով արդէն ցոյց է տալիս, որ ընդունակ է երեխաներ ծնելու և թէ պսակուելուց յետոյ չբեր չի մնալ:

Յայտնի է, որ կնոջ ամուսնեան պատճառը մեծ մասամբ, մինչև անգամ 90<sup>0</sup>/<sub>0</sub>, մարդն է լինում. բայց ի՞նչ անես, որ դրա համար գրեթէ անմեղ կլինն է պատժւում \*)...

Ժ.

Պոռնիկութիւնն արդի եւրոպական ազգերի մէջ մի բաւական կազմակերպուած ամբողջութիւն ունի, և բոլոր պոռնիկներին կարելի է բաժանել երկու մեծ խմբի. յայտնի, ցուցակագրուած պոռնիկներ, որոնց պարապմունքն է անառակութիւնը, և ծածուկ պոռնիկներ, որոնց անունը ցուցակի մէջ չի մտած:

Յայտնի պոռնիկներն երկու տեսակ են. մեծաբնակներ, որոնք մենակ են ապրում մասնաւոր

\*) Տես իմ գրքերը՝ «Ի՞նչ է անառակութիւնը», «Վեներական ախտեր» և «Սիֆիլիս»:



բնակարանները մէջ, և հասարակաց տներում ապրող պոռնիկներ: Թէ մենաբնակները և թէ միասին բնակուողները սովորաբար դրուած են բժշկական հսկողութեան տակ:

Այս միևնոյն դասին են պատկանում և թափառաշրջիկ պոռնիկները, որոնք մեծ մասամբ միևնոյն մենաբնակներից կամ հասարակաց տներում ապրողներից են ելնում, միայն հետզհետէ աւելի ու աւելի ցած ընկնելով դառնում են թափառական ցնցոտաւոր մուրացկաններ: Դրանք կոպէկների համար անառակութիւն անելով՝ հազիւ կարողանում են իրանց խղճուկ գոյութիւնը պահպանել:

Յայտնի հասարակաց կանանցից շատ աւելի բազմաթիւ են ծածուկ պոռնիկները, որոնք բժշկական և ոստիկանական հսկողութեան տակ չեն: Ամեն մեծ քաղաքում էլ ահազին բազմութեամբ կան այդ «կամելիա» (ճապոնաւարդ) կոչուածները:

Կամելիա անուան տակ հասկացում են գաղտնի պոռնիկներից այն ամենքը, որոնց յաջողում է անառակութեան միջոցով առաջանալով աչքի ընկնել և ինչպէս մի հարուստ կին ապրել ամեն տեսակ շոտայութեամբ ու փարթամութեամբ:

Որև է հարուստ մտրդ մի առանձին շքեղ բնակարանում տեղաւորում է իրան դիւր եկած այսպիսի մի կնոջ, որ և հասկանալի է, վատնում է իրան պահողի փողերը:

Բացի իրանց այդ յայտնի հովանաւորից, կամելիաները միշտ մի քանի ուրիշ թաքուն մարդիկ էլ են ունենում, որովհետև նրանք երբէք մէկով չեն բաւականանում. բայց միևնորին, ի հարկէ, առանձին զգուշութեամբ, խաբելով թաքցնում են իրանց բուն պահողի սչքից:

Այդ կանայքն, ընդհանրապէս, ամեն պատահողի էլ խաբում են, գողութիւն են անում և իրանց «բարեկամներին» քանդում:

Յաճախ այսպիսի հասարակաց կանայք վերոյիշեալ նպատակներով ընկերանում են ճարպիկ խաբեբանների և փող կորզողների հետ ու կազմում առանձին ընկերութիւններ:

Բացի կամելիաներից կան և մի դաս պակաս հարուստ մենաբնակ պոռնիկներ, որոնք մեծ քաղաքներում առաջ են գալիս կասկածելի նորաձեւութեան կրպակների, ամեն տեսակի արհեստանոցների ու գործատանների մէջ աշխատող կանանցից, ինչպէս և գործարանների բանուորուհիներից, տեղ չունեցող սպասուհիներից և այլն, և սրանք բոլորը միասին կազմում են մենաբնակ պոռնիկութեան ահազին բանակները:

Վերևում թուած կանանցից շատերի համար պոռնիկութիւնը սկզբում միայն փոքր ինչ բարութեամ է իրանց վերին աստիճանի համեստ ապրուստը, որ ձեռք են բերում իրանց աշխատանքով:

Այսպիսի աղջիկն սկզբում ամաչում է իր պարապմունքից և գործը շատ թաքուն է տա-



նում. բայց յետոյ սկսում է արդէն յայտնի պոռնը-  
կութիւն անել, որովհետեւ կամաց կամաց վարժ-  
ւում է իր նոր պարապմունքին, որ աւելի թեթեւ  
է և աւելի շատ փող է բերում, քան առաջուանը,  
որ արդէն թողնում է բոլորովին:

Այս ամենին օգնութեան է հասնում և ար-  
բեցողութիւնը, առանց որի սկզբի ժամանակ-  
ներում, երբ խիղճը դեռ մեռած չի լինում, ան-  
հնարին է այդ պարապմունքը:

Եւ անա այսպէս, աշխատաւոր կինը հետըզ-  
հետէ դառնում է նախ ծածուկ մենաբնակ պոռ-  
նիկ, և ապա շուտով յայտնի մենաբնակ է դառ-  
նում, կամ թէ ուղղակի հասարակաց տունն է  
մտնում:

Քիչ չէ պատահում, որ մենաբնակներն ի-  
րանց պարապմունքը թաքցնելով այնպէս են  
ձևացնում, որ իբր թէ պատուաւոր կանայք են,  
և թէ ամուսիններն երեսի վրայ թողել են իրանց,  
կամ թէ իբրև սգաւոր այրի ներկայանում: Նրանք  
վերին աստիճանի ճարպիկ կերպով կարողանում  
են խուսափել ու պրծնել բժշկական ու ոստիկա-  
նական վերահսկողութիւնից, և այդ պատճառով  
միայն չեն մտնում ցուցակագրուած պոռնիկների  
շարքի մէջ:

Մի առանձին տեսակի պոռնիկներ էլ կան,  
որոնք, ըստ երևութին, միջին տեղն են բռնում  
մենաբնակների և հասարակաց տների կանանց  
մէջ: Դրանք, որ նոյնպէս հասարակաց կանայք  
են, գտնուում են այնպիսի կաւատ կանանց ու

մարդկանց ձեռքի տակ, որոնց գործերի լասին  
աւելի լաւ է լուել: Դա մեծ հասարակական չարիք  
է: Այս կարգին պատկանում են, ի միջի այլոց, և՛  
պարող կանանց, պարունհիների խմբերը:

Աւելի լաւ է լուել նոյնպէս և թոյլատրուած  
հասարակաց տների կեանքի մասին, քանի որ  
ընդհանրապէս կարելի է ասել, որ մեր արդի հա-  
սարակութիւնը հեշտասիրական գուարձութիւն-  
ներ ձեռք բերելու նկատմամբ հին ազգերի անա-  
ւակութեան արժանաւոր մրցակիցն է հանդիսա-  
նում:

Այնտեղ, ուր կեանքի դատարկութիւն է  
իշխում, հասկանալի է, օրն անց է կենում պա-  
րապութեան, կռիւների, բամբասանքների, արբե-  
ցութեան ու թղթով վիճակ բանալու մէջ:

Հասարակաց տներում ընթերցանութեամբ  
շատ քչերն են պարապում, և եթէ կարդում էլ  
են՝ մեծ մասամբ զգացկոտ բնաւորութեան գը-  
րուածքներ: Պէտք է այս էլ աւելացնել, որ վար-  
սավիւրները սնգուրում, շղարում են, կարմիր  
ու սպիտակ քսում այդ աղջկերանց երեսները,  
որոնք միշտ սպասում են «հիւրերի»: Յաճախ մի  
այդպիսի դժբախտ կնոջ հնգի չափ հիւր է բա-  
ժին ընկնում: Ամեն ինչ վերջապէս անզգայաբար  
մեքենայօրէն է կատարում այդ տեղ, այդ թշուա-  
ռութեան վայրում:

Բացի սպասած «հիւրերից», դեռ ուրիշ սոս-  
կալի հիւրեր էլ կան, — արբեցողութիւնն ու սիֆի-  
լիսը վեներական ախտերի հետ միասին, յատկա-



պէս սիֆիլիսը: Պետերբուրգում մի օրուայ քրն-  
նութիւնից դուրս եկաւ, որ առաջնակարգ հա-  
սարակաց տներից մէկի մէջ միայն՝ աղջկերանց  
հինգ տղոսը սիֆիլիսով հիւանդ էին...

Հասարակաց տուն մտնող աղջիկը կամաց  
կամաց սովորում է արբեցութիւն, որից, ինչ-  
պէս և անքուն գիշերներից և ամեն տեսակ մո-  
լեկան շուայտանքներից, շուտով սկսում է պա-  
ռաւել:

Վրան աւելացրէք և հիւանդութիւնները, ո-  
րոնք նոյնպէս չեն գեղեցկացնում, և անս աղ-  
ջիկը՝ առողջութիւնն ու մարմնի թարմութիւնը  
կորցրած լինելով՝ անցնում է աւելի վատ հաս-  
տատութեան մէջ. յետոյ աւելի ևս վատ տեղ է  
ընկնում, հետգհետէ աւելի ու աւելի ցած է ընկ-  
նում և վերջ ի վերջոյ՝ դեռ ևս տարիքով թէպէտ  
ոչ ծեր, բայց կերպարանքով արդէն պառաւած՝  
մեռնում է որ և է օդետան մէջ, որ և է օթկա-  
նում կամ հիւանդանոցում իբրև մուրացկան կամ  
թափառաշրջիկ:

Քչերն են այս ճանապարհի կէսին կանգ առ-  
նում և փող հաւաքելով՝ հասարակաց տնից դուրս  
գալիս ու իրանց համար բնակարան վարձում.  
կամ թէ մի պահող են գտնում, որ իրանց տե-  
ղաւորում է մի առանձին բնակարանում, կամ  
թէ չէ, դրանց ազատում է, որտեղ որ կայ, Մա-  
րիամ Մագթաղինացու ապաստանարանը:

Ընդհանրապէս կարելի է ասել, որ կնոջ հա-

մար շատ աւելի հեշտ է պոռնիկ դառնալը, քան  
թէ անառակութիւնից դուրս գալը:

Մինչև անգամ եթէ բոլոր պայմաններն էլ  
շատ յաջող են լինում, և աղջիկը փող հաւաքե-  
լուց յետոյ իր համար առանձին բնակարան է  
բռնում, շուտով դարձեալ ստիպուած է լինում  
նորից հասարակաց տուն մտնել. որովհետև չի  
կարողանում իր տունը կառավարել և անտեսու-  
թիւն ու խնայողութիւն անել, միւս կողմից ոչ  
մի աշխատանք էլ չի ունենում, իսկ ժողոված  
փողը ջրի պէս գնում է:

Այս բոլոր աղջկերքը սակաւ բացառութեամբ,  
կարելի է ասել, մի առանձին հոգեկան պահանջ  
ունեն, այն է՝ սիրել մէկին, և ուստի շատերն  
ունեն մարդիկ, որոնց և սիրում են բուն ու  
անմիտ սիրով:

Այդպիսի մարդուց աղջիկը ամեն տեսակ  
վիշտ, նեղութիւն, հայհոյանք կրում է, մինչև  
անգամ ծեծ է ուտում. բայց ամեն ինչ տանում  
է, և յաճախ նոյն իսկ իր այնպիսի սարսափելի  
աշխատանքով ձեռք բերած վերջին կոպէկներն էլ  
տալիս է նրան: Այդպիսի տղամարդիկ, այդ գար-  
շելիները... մարդկութեան ծանծ ու կղկղանքն  
են դրանք...

Եւ այսպէս, պոռնիկների մէջ չի անհետա-  
նում սիրելու և մէկի հետ կապուելու պահանջը:  
Դա հոգեբանական կողմից ուշադրութեան ար-  
ժանի մի իրողութիւն է: Որ պոռնիկն այդ անում  
է ոչ թէ անգիտակցաբար, ոչ էլ այն մարդուց



վախենալով, այդ արդէն ցոյց է տալիս, թէ նրա մէջ դեռ մնում է մարդկութեան մի կայծ, աստուածային կայծը:

ԺԱ.

Ի՞նչ է պոռնիկը. ի՞նչպիսի մարդ է դա, որ փողի համար անձնատուր է լինում ամեն պատահողի. ի՞նչն է ստիպում նրան այդ բանը բռնել և բաց չթողնել. արդեօք յօժարակամ սիրով է նա իր արհեստը բանեցնում, թէ՛ առանձին պատճառներ կան, որ նրան այդ տեղն են ձգում. ի՞նչ է վերջապէս պոռնիկի հոգին:

Դառնանք այս բժշկական խնդրի գրականութեանը:

Բոլոր հասարակաց կանանց կարելի է բաժանել երկու խոշոր և իրարու բոլորովին հակառակ խմբի:

Այս խմբերից մէկին պատկանում են նրանք, որ գիտակցաբար և շատ լաւ հասկանալով, թէ ինչ են անում՝ պոռնիկների շարքն են մտնում և սիրով շարունակում են իրանց արարքը:

Այս կանանց համար, շատ հեղինակները կարծիքով, պոռնկանալու հիմնական պատճառը իրանց բնածին ախտաւոր հակումներն են՝ իբրև հետևանք այլասերման \*):

\*) Տես իմ գրքերը՝ «Կարիք և բարեպործութիւն», և «Ով է յանցաւորը»:

Այսպիսի կանայք, մի բժշկի ասելով, ի բնէ պոռնիկ են. կարծես, նրանց ճակատին գրած է, որ պոռնիկ պիտի դառնան առանց կեանքի պայմաններից կախում ունենալու:

Մի ուրիշ բժշկի կարծիքով՝ պոռնիկների մէջ կան այնպիսիները, որոնք իրանց աննորմալ հոգեկան յատկութիւնների պատճառով առաջուց արդէն սահմանուած են այս արհեստը բանեցնելու:

Դրանք ի ծնէ պոռնիկներ են, որոնք երբեմն ամենալաւ նիւթական պայմանների մէջ ևս՝ հաստատ կերպով իրանց կոչմանն են դիմում, և եթէ մինչև անգամ բարեյաջող հանգամանքների մէջ դրուեն, դարձեալ միշտ իրանց կեղտոտ արհեստին են վերադառնում:

Դրանցից շատերի համար կարծում են, թէ զո՞ն են հարստահարութեան, կարիքի, գայթակղութեան և տղամարդկանց անառակութեան. բայց այդ բոլորովին անճիշտ է:

Այդ կանայքն իրանք պարզ կերպով ձեզ կասեն, թէ իրանց համար անհասկանալի է կեանքն առանց կրքին բաւականութիւն տալու, կրքին, որ իսկապէս այրում է իրանց:

Ոչ մի կերպ կարելի չէ ցոյց տալ, թէ ի՞նչու այս կանայքն ամեն ինչ արհամարհելով, — մոռանալով ծնող, ընտանիք, կրօն, թողնելով տուն տեղ, ամեն ինչ, դնում պոռնկում են և ամեն բան զիտակցաբար զո՞ն են բերում իրանց պոռնկական ցանկութեանը:



Ստատիստիկան, վիճակագրութիւնը, ցոյց է տալիս, որ շատ քիչ կանայք են առանձին արտաքին ազգեցութիւնների շնորհիւ պոռնիկ դառնում. մեծ մասամբ ոչ թէ պատահական պատճառներով են անառականութեան ճանապարհով գնում, այլ նրա համար, որ ամօթի զգացում ասածը չունեն, բարոյապէս բոլորովին անանկ են: Այսպիսի աղջիկը նախ ընկնում է, ապա հետըզհետէ գնում հասնում է մինչև հասարակաց տունը:

Բունն բնաւորութեան տէր կինը, որ սիրուց անկարգ քայլն անում է և որին ձգում հեռանում է իր ուխտագրութ սիրականը, այդպիսի կինն աւելի շուտ ինքն իրան կը սպանի, քան թէ պոռնիկ կը դառնայ: Ինչքան էլ մեծ լինի նրա ցաւը, ինչքան էլ դժուար լինի նրա կացութիւնը, նա անառակութեան ճանապարհը չի բռնիլ, եթէ նրանում ի բնէ շատ քիչ զարգացած չլինի ամօթի զգացումը, եթէ նա առանձնապէս հակում չունենայ դէպի կոպիտ զուարճութիւններ և շքեղ ու ցոփ կեանք:

Կարելի է հաւատացած լինել, ասում է մի ընկերաբան մատենագիր, որ կանոնաւոր բարոյական կազմուածք ունեցող հարիւր անգլիացի աղջկերանցից իննսուն և ինը աւելի լաւ կը համարեն կեանքի կուռի մէջ սովամահ լինել, քան թէ պոռնկական կեանք վարել:

Բնածին պոռնիկը մայրական սէր ասածը չգիտէ. նա սիրով կապուած չէ և իր ծնողների ու ազգականների հետ. նրան անծանօթ է և

ամօթ ու պատկառանք և խղճահարութիւն ու պարկեշտութիւն. նա միայն մի բանի համար է մտածում,— բաւականութիւն տալ իր մարմնական տենչանքներին ու անանական կրքին:

Անամօթութիւնն է կնոջ բարոյական ապականութեան առանձին յատկանիշը, և անամօթութիւնն է բնածին պոռնիկների բնորոշ գծերից մէկը, ասում է նշանաւոր Լամբրոզօն:

Սաստիկ հեշտասիրութիւնը չէ դեռ, որ կնոջը պոռնիկ է դարձնում. եթէ մի կին պոռնիկ է դառնում, պատճառը ոչ թէ նրա տոբիանքի մէջ է, այլ որ նա բարոյական զգացում չունի:

Նշանաւոր պրոֆեսոր Տառնովսկին՝ հասարակաց կանանց այս տիպի վերլուծութիւնն անելով՝ հաստատում է, թէ այս կարգի կանանց բժշկական (մարդաչափական և կենսաբանական) հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ նրանցում կարելի է ահագին չափով ախտանիշներ գտնել այլասերման և բնածին բարոյական պակասութիւնների:

Միջին դասակարգի աղջկայ մէջ շատ վաղ է երևան գալիս բնածին ախտաւորութիւնը:

Բնածին ախտաւոր երեխաների հիմնական բարոյական դիմագծերն են՝ չափազանց ստախօսութիւն, ամօթի զգացմունքի բթութիւն, աշխատանքից փախչել և ընդհանրապէս ամեն բարոյական գաղափարներ ըմբռնելու թոյլ ընդունակութիւն:

Ապա բնականից վաղ կամ խիստ ուշ ար-



բունքի հասնել, սեռական հասունութեան ժամանակ սաստիկ բուռն կամ թոյլ, ընկճուած տարփաւորութիւն, ցանկութիւնների և ձգտումների չափազանց ուժգնութիւն, դիւրագրգիռ թուլութիւն, անտարբեր վերաբերմունք դէպի բոլոր շրջապատը և հիւանդագին զարգացած ինքնասիրութիւնը, — ահա չարիքի մեծ մասը:

Այսպիսի անձնաւորութիւնից կամաց կամաց պատրաստուում, առաջ է գալիս բնածին պոռնիկը, և յաջող հանգամանակների մէջ միշտ աւելի ու աւելի պարզ կերեայ նրա բնածին յատկութիւնը:

Այսպէս, ուրեմն, իսկական պոռնիկը ծնուած ժամանակն արդէն տրամադիր է լինում դէպի այդ ախտը, և նայելով հասարակական կեանքի պայմաններին, կրթութեան, միջավայրին և այլն, իր հակումները երևան են գալիս վաղ կամ ուշ, զօրեղ կերպով կամ թոյլ. երբեմն բնաւ երևան էլ չեն գալիս այդ հակումները, բայց և այնպէս նա միշտ պահում է իր ծայրայեղ ընդունակութիւնն ախտաւոր դառնալու:

Մանուկ հասակից արդէն, ասում է մի ուրիշ գիտնական, այսպիսի անհատները մի առանձին ցանկութիւն ու սէր են ցոյց տալիս դէպի ամեն ինչ, որ վատ ու արգելուած է. և ժամանակի ընթացքում, քանի մեծանում են, նրանց այս կիրքն ևս աճում զարգանում է:

Դաստիարակները ինչքան էլ աշխատում են, ոչ մի կերպ չեն կարողանում նրանց յետ սովո-

րեցնել ստախօսութիւնից ու կեղծաւորութիւնից, որ շարունակ բանեցնում են: Նրանք բոլորովին անտարբեր են վերաբերում դէպի իրանց ծնողների վիշտն և ուրախութիւնը, որ նրանց վրայ վաղանցիկ սպաւորութիւն է միայն թողնում:

Շատ աչքի է ընկնում այդպիսիների մէջ, մանաւանդ, վատ բնագիւնների անսովոր կերպով վաղ զարթնելը, գողութեան հակում և անկարեկցութիւն, նոյն իսկ խտասարտութիւն դէպի իրանց ընկերները:

Եւ այսպէս կան ի ծնէ պոռնիկներ, որոնք իրանց ներքին բերմունքով են բանեցնում իրանց արհեստը: Դրանք, այսպէս ասած, սիրոյ սպասուելիներն են, սեռական գործողութեան քրմուհիքը: Դրանք վեհերա աստուածունու պաշտամունքի քրմուհիներն են այժմեան հասարակութեան մէջ:

ԺԲ.

Մի քանի բնորոշ օրինակներ բերենք զրականութիւնից:

Մի հարուստ և բարձրաստիճան մարդու կին, որ մի շատ պատուաւոր ընտանիքից էր ծագում, քաղաքի ուրիշ թաղում երկու կահաւորուած սենեակ էր վարձել և այնտեղ ծածուկ իր մօտ էր ընդունում իր մարդու բարեկամներին և նոյն իսկ իրան անձանօթ մարդկանց:

Իր սիրողներից նա փող չէր առնում. ընդ-



հակառակն, մինչև անգամ ինքն էր յաճախ նրանց ընծաներ տալիս, որի համար շատ անգամ բանալիքը վերցնելով՝ գողանում էր իր մարդուց:

Այսպիսի բնածին պոռնիկները միշտ անանձին հաճոյքով են ծառայում իրանց կուռքին— սեռական գործողութեանը: Պրոֆեսոր Տառնուվսկին ասում է, որ ոչ-բնածին պոռնիկը օրէցօր աւելի ու աւելի զգւում է տղամարդկանցից ու սեռական գործողութիւնից. մինչև անգամ աւելի ևս,—որքան տղամարդն աւելի կրքով է վերաբերւում, այնքան նա աւելի դարշելի է դառնում այդպիսի պոռնիկի համար: Ահա թէ որքան իր ճաշակով չէ իր արարմունքը:

Բնածին պոռնիկի համար ընդհակառակն է լինում: Օրինակ, կան կանայք, որոնց պահում են հարուստ երիտասարդներ. նրանց շրջապատում են ամեն ջրեղութեամբ, ուղածի չափ փող են տալիս, գոհարեղէններով ու շոգակներով զարդարում են. այսպէս ուրեմն նրանք ամեն բան ունեն. և երիտասարդ սիրական, և ամեն առատութիւն, բայց դարձեալ այդ կանայք իրանց համար ուրիշ սիրականներ են ճարում և մինչև անգամ յաճախ այս վերջիններին, իբրև տղամարդ, շատ բարձր չեն դասում, ասելով, թէ նրանք շատ աւելի վատ են, քան իրանց գլխաւոր պահողը: Այսպէս լինելով հանդերձ՝ այս կանայք սիրականներ փոխելով՝ նորանոր կապեր են հաստատում, միշտ զուարճութիւն որոնելով նոր պատահական մարդկանց մէջ:

Մի քսան տարեկան աղջիկ մարդու է գնում և քսաներեք տարեկան հասակումն արդէն երկու երեխայի մայր դառնում: Այս ժամանակից սկսած նա անհոգ է վերաբերւում դէպի իր երեխաները և սկսում է յաճախել պարահանդէսները:

Շուտով նա կապ է հաստատում մի երիտասարդի հետ. նրանց յարաբերութիւնը տևում է 18 ամիս, և այդ երիտասարդից ունենում է մի աղջիկ: Յետոյ հաշուում է իր մարդու հետ և վերադառնում է նրա մօտ. բայց մի քանի ժամանակից յետոյ նա նորից սիրական է դառնում մի առևտրականի, որ հետը վատ էր վարւում և ստիպում էր նրան հարբելու չափ խմել: Այս գինեկաճառից նա նոյնպէս մի երեխայ է ունենում և նրանից յետոյ ճարում է մի շարք ուրիշ սիրականներ, որոնց հետ նամակագրութիւն էր պահում:

Մի ուրիշ օրինակ: Հարուստ ծնողների միակ աղջիկը, որ աւարտել է Պետերբուրգի զինանազիօններից մէկը, այժմս իբրև ծածուկ պոռնիկ թափառում է քաղաքի բուլուարներում—մեծ փողոցներում: Ոչ ծնողների հարուստ տունը վերադառնալը, ոչ ուղղիչ հաստատութեան մէջ մնալը, ոչ մօր արցունքները և ոչ հօր խնդիրքները չեն կարողանում ստիպել այդ զարգացած աղջկան թողնել իր սարսափելի պարապմունքը:

Դարձեալ մի օրինակ: Մի աղջիկ, որ պատուաւոր ու յայտնի ընտանիքից էր, փախչում

*Handwritten signature or mark in blue ink.*



է անից. սկսում է խիստ անառակ կեանք անց կացնել. յետոյ տուն է դառնում, հայրն ընդունում է նրան ու ներում: Բայց տեսէք թէ երախտազիտութեան տեղակ ինչ է անում: Նա աւելի ևս պահանջկոտ է դառնում, իրան աւելի վատ է պահում, վերջապէս մինչև այն տեղն է հասնում, որ մինչև անգամ պատուելի ծնողների տունն է մտցնում տղամարդկանց՝ հետներն անառակութիւն անելու համար:

Այս եղել է, կայ և կը լինի՝ իբրև բնածին պոռնկութեան մի հասարակ երևոյթ: Իզուր է, որ կրթութեան մէջ են փնտռում այս երևոյթի պատճառները, ասում է պրոֆեսոր Տառնովսկին: Արդարև, երբեմն կրթութիւնն ու դաստիարակութիւնն ազդում ու սանձում են այսպիսի կանանց ներքին մոլեկան մղումները. բայց ոչ միշտ: Չպէտք է մոռանալ նաև միջավայրը և, որ աւելի կարևոր է՝ ժառանգական կողմերը, այսինքն թէ արդեօք հիւանդ թէ առողջ ծնողների զաւակ են: (Ծնողների թոքախտ, ալիոնոլականութիւն, սիֆիլիս):

Այժմ հասկանալի կլինի, ինչ որ տեսնում ենք բոլոր ազգերի կեանքի մէջ բոլոր ժամանակներում: Պոռնկութիւնն եղել է, կայ և կը լինի, քանի դեռ վերոյիշեալ բնածին պոռնիկները կը լինեն: Եւ որովհետև այդ պոռնիկները միշտ եղել են, ապա ուրեմն և ասղագայում ևս պոռնկութիւնը կը լինի և կը պահպանուի յատկապէս այդ տարրերով:

Ոչ թէ պատահաբար կամ բռնի կերպով պոռնկութեան մէջ ընկած կանայքն են կազմում պոռնկութեան հիմքը, այլ բնածին մոլի պոռնիկները: Սրանք են միանգամայն և այն անսպառ աղբիւրը, որից պոռնկութիւնը միշտ նորանոր ուժեր է ձեռք բերում:

Պոռնկութեան միջուկը, ասում է պրոֆեսոր Տառնովսկին, միշտ այն կանայքն են կազմում, որոնց համար պոռնկութիւնն և իր հետ կապուած անառակութիւնը մի ցանկալի կենցաղավարութիւն է, որ լիովին բաւարարութիւն է տալիս իրանց: Այսպիսիները յօժարակամ չեն թողնում իրանց արհեստը և եթէ կտրւում էլ են իրանց արհեստից, միշտ նորից նրան են վերադառնում:

Այսպիսի կանայքը բարոյապէս այնքան են բթացած, որ ծախու սիրոյ խայտառակութիւնն անհամեմատ պակաս ծանր է թւում իրանց, քան ուրիշ որ և է պարապմունք ու աշխատանք:

Այսպէս ուրեմն հասկանալի է դառնում, թէ ինչո՞ւ ոչ պատիժ ու պատուհաս, ոչ տանջանք ու հալածանք ոչ մի նշանակութիւն չունեն և չեն ունենալ այս կանանց համար: Այստեղից պարզ է ուրեմն, թէ ինչպէս անհիմն են այն մարդկանց դատողութիւնները, որոնք ձգտում են պոռնկութիւնը հասարակաց տները փակելով ոչնչացնել: Այդ հաստատութիւնները որ փակէք, ի՞նչ պիտի անէք հապա այդ բաքոսականներին, այդ մոլի շուայտոտներին, որոնք մինչև մահ էլ չեն դադարիլ անառակութիւն անելուց:



Այսպէս ուրեմն իբր-աքսորուած աղախին պոռնիկի պաշտպանութեան համար գրողները ամենքը մեղանշում են ճշմարտութեան դէմ, նոյն իսկ պոռնիկների դէմ, որոնք յաճախ մինչև անգամ չեն հասկանալ, թէ իրանց համար ի՞նչ են ուղում այդ պաշտպանները:

Ազատութիւն էլ կայ, ազատութիւն էլ պէտք է միայն հասկանալ, թէ ինչ է ազատութիւնը: Չէ որ հասարակաց տներում կախուած կայ մի յայտարարութիւն, որի մէջ ասում է, թէ ամեն կին, երբ ուզենայ, կարող է ընդ միշտ թողնել, դուրս գալ. ոչ մի կողմնակի պատճառ, օրինակ՝ տան տիրուհուն տալիք պարտքը, չի կարող արգելք լինել նրա դուրս գալուն: Բայց արգէօք շատերն են դուրս գալիս և թողնում այդ ապաստանարանը...

Եղել են ժամանակներ, երբ հսկողութիւն չկար, ու ծածկում էր պոռնիկութիւնը. ժամանակ է եղել, պոռնիկութեան դէմ հալածանք են հանել, ու դարձեալ ծաղկելիս է եղել պոռնիկութիւնը: Կը նշանակէ ախտի արմատը հասարակաց տների ու հսկողութեան մէջ չէ, այլ հէնց իրանց կանանց մէջ, որոնք ցանկանում են պոռնիկութիւն անել և առանց դրան չեն կարող ապրել: Փոխեցէք, եթէ կարող էք—բայց դուք այդ չէք կարող—այդ կանանց բնաւորութիւնը և այն ժամանակ զինուեցէք թոյլատրուած հասարակաց տների դէմ և օրէնքի, որ սիֆիլիսը պակասեցնելու և ժողովրդի բարոյականութիւնը բարւոքելու համար

կարգ ու կանոնների տակ է դնում պոռնիկներին:

Պոռնիկութեան վրայ որ հսկողութիւն չի լինում, մի քանիսի կարծիքի հակառակ, միշտ շատանում է անառակութեամբ պարապող կանանց թիւը: Եւ շատ հասկանալի է: Հսկողութիւն որ չի լինում, պոռնիկների թիւը այնպէս խիստ մեծանում է, որովհետև այդ ժամանակ նրանց ընկերանում են և ծոյլ ու անգործ կանայքը, և արբեցողները, և այն ամենքը, որոնք հսկողութեան եղած ժամանակ վախենում են պոռնիկութիւն անել և այդ ժամանակ պայմանական առաքինի կանայք են դառնում: Իրանք պատահական պոռնիկներ են, մինչ միւսները բնածին պոռնիկ են:

Իրանք այն պոռնիկներն են, որոնք կեանքի այս կամ այն պայմանների շնորհիւ, իրանց անփորձութիւնից, պատահմունքով են ընկնում անառակների շարքը, մինչ իրանց ներքին վիճակով բոլորովին անպէտք են իրանց յանձն առած դերի համար: Այսպէս է ասում գիտութիւնը:

ԺԳ.

Պոռնիկների երկրորդ խմբի կանայքը բնածին ախտաւորներ չեն. դրանք պոռնիկ են դառնում միայն հանգամանքներից ստիպուած: Եւ քիչ չեն այդ հանգամանքներն ու պայմանները,



որ անձար կանանց դնում են պոռնիկութեան ճանապարհի վրայ \*):

Եթէ իմանայինք, թէ ինչն է պատճառ լինում այդ կանանց անկման, իմանայինք այն հանգամանքները, որոնց մէջ մեծացել են դրանք, սկսել են ապրել և վերջն այդ անկմանն են հասել, այն ժամանակ գուցէ որևէ արդարացման կէտ գտնէինք դրանց համար և հասկանայինք, որ կեանքի մէջ մի քանի գէպերում դրանց համար ոչ մի ուրիշ ելք և ճանապարհ չի եղել, բայց եթէ պոռնիկ դառնալ: Չէ՞ որ ամեն մարդ էլ ընդունակ չէ թոյն ընդունելու կամ ջուրն ընկնելու:

Կարիքը, տաժանելի կեանքը, աղքատութիւնը ծնուած օրից, ոչ մի կրթութիւն չստանալը, բոլորովին անպատրաստ լինելը իր աշխատանքով ապրուստ ճարելու, տեղ գտնելու անհնարութիւնը, և եթէ տեղ էլ գտել է՝ չնչին վարձը, — այս ամենը յաճախ նոր մեծացած երեխային պոռնիկութեան գիրկն է ձգում: Կասկած չկայ, որ անկումն առաջ է գալիս մեծ մասամբ արած քայլի նշանակութիւնը լաւ չհասկանալուց, որը իր կողմից կախուած է թերի կրթութիւնից, ամօթի պակասութիւնից, այլ և անտեսական պատճառներից:

Կարիքն այնքան էլ հեշտ տանելի բան չէ կեանքի մէջ, իսկ աղքատութիւնն, ի հարկէ, շատ

\*) Տես իմ գիրքը՝ «Ով է յանցաւորը»:

է նպաստում պոռնիկութեանը, և շատ անգամ դառն իրականութիւնը ոչնչացնելով միայն կարելի է կռուել պոռնիկութեան դէմ:

Մի բժշկի ժողոված տեղեկութիւններով, Բերլինի պոռնիկների եօթանասուն տոկոսը բանւորների կամ մանր արհեստաւորների աղջկերք են եղել: Եւ իսկապէս, մարդ անկեղծ ցաւում է այդպիսի կանանց վրայ, որովհետև սրբան մեծ ներքին կուլ պիտի ունենայ այսպիսի կինը, մինչև որ կարողանայ վճուել պոռնիկ դառնալ:

Սակէ չի ուզիլ, որ արհամարհանքն արհամարհանք է առաջ բերում, ծաղրը՝ զայրոյթ հասարակութեան դէմ, որ իր քաղաքակրթութեամբ և առաջադիմութեամբ պարծենալով հանդերձ՝ թոյլ է տալիս, որ մարդիկ ամեն օր այդպէս կորստի մատնուեն:

Շատ աղջկերք պոռնիկ են դառնում կորցնելով իրանց անմեղութիւնը՝ խաբուած իրանց հետ ամուսնանալու խոստումից կամ թէ մինչև անգամ պատահաբար բռնաբարուած լինելով:

Քանի դեռ կոյս են, անձանօթի վախը նըրանց յետ է պահում օրհասական քայլն անելուց. բայց մի անգամ որ անմեղութիւնից զրկւում են, սկսում են մտածել, թէ ամեն ինչ կորած է, թէ կորցրած պատիւն այլ ևս կարելի չէ դարձնել. ուստի և մեծ մասամբ աւիանայ աշխատում են որքան կարելի է շուտ օգուտ քաղել իրանց դժբախտ դրութիւնից:

Կնոջ համար կուսութիւն կորցնելը հոգեբա-



նական մեծ նշանակութիւն ունի. այդ դէպքում նրա ամբողջ էութիւնը խանգարւում է, և շատ աղջկերք՝ զօրեղ բարոյական զգացում չունենալով՝ վճռում են ամօթի վերջին մնացորդն էլ դէն ձգել և մոլութեան գիրկն ընկնել:

Տղամարդու ողջախոհութեան կորուստն ևս մեծ ու կարևոր նշանակութիւն ունի. բայց դժբախտաբար մեր հասարակութիւնը դեռ ևս չի հասկանում այս շատ կարևոր բանը:

Կան շատ պոռնիկներ, որոնք, իրանց շրջապատի ձեռքով, ծնուած օրից սկսած պատրաստուում են հասարակաց կին դառնալու համար. և նրանք պոռնիկ են դառնում ու բնաւ չեն էլ հասկանում, թէ ինչ գարշելի բան են անում, որովհետև այդ կեղտի մէջ ծնուել, մեծացել, ապրել են ու կեանք են մանում:

Շատ անգամ ծնողները, որովհետև դրսումն են աշխատում, իրանց երեխաներին յանձնում են հարևանների հսկողութեանը, որոնք, ի հարկէ, քիչ ուշադրութիւն ու խնամք են տանում ուրիշ երեխաներին:

Երեխաներն այս պատճառով մեծանում են առանց վերակացութեան, շատ անգամ վատ օրինակներ են տեսնում, բնաւ չեն կրթւում, կամ անկանոն ու պակասաւոր կրթութիւն են ստանում. և այս ամենը մեծ ազդեցութիւն է թողնում երեխայի զգայուն սրտի վրայ, որով և նա շատ բան այնպէս չի իւրացնում, ինչպէս հարկաւոր է կրթուած մարդուն:

Սրանից էլ այն է առաջ գալիս, որ ինչ որ այսպիսի երեխային կարելի և թոյլատրելի է թւում, իսկապէս սովորաբար հակառակն է լինում. այնպէս որ այսպիսի երեխայի հասկացողութիւնը մոլութեան մասին բոլորովին ուրիշ տեսակ է լինում, քան ինչ որ է իրօք:

Միւս կողմից երեխաները, եթէ իրանց ծնողների մօտ էլ մնում են, շատ անգամ այնպիսի բաներ են տեսնում, որ բնաւ չպիտի տեսնէին. այս էլ, ի հարկէ, վաղաժամ փչացնում է նրանց: Օրինակ՝ աղքատների, բանուորների բնակարանները, ինչ չարիքի պատճառ ասես, որ դրանք չեն լինում:

Այդ բնակարանները շատ անպիտան ու նեղուածք են. ուստի և անստակութեան աղբիւր են դառնում, որովհետև մի սենեակը ամեն ինչ է: Այնտեղ ուտում խմում են, նստում վեր կենում. այնտեղ և բազմանգամ ընտանիքը կողքէ կողք պառկում քնում է. երկու սեռի հասակաւոր երեխայքը իրար մօտ են քնում և յաճախ վկայ են դառնում իրանց ծնողների ամուսնական կողակցութեանը:

Ի՞նչ կարելի է սպասել այն աղջիկ երեխայից, որ այսպիսի հանգամանքում է ապրում:

Բացի այս, աղքատ ծնողները դժուար թէ կարողանան սպասել, մինչև որ երեխան հասնի և նոր իր աշխատանքի լուման ձգի ընտանիքի ընդհանուր գանձանակի մէջ: Շատ անգամ աղջկերքը փոքր հասակից սկսած ծաղիկ և ուրիշ բաներ են



ծախում փողոցներում, ուր նրանք յաճախ ուրիշ բաներ էլ են լսում փողոցի մարդկանցից, շուտով ծանօթանում են դանազան մոլուկիւններին և կամաց կամաց պոռնիկ են դառնում:

Աւելի ևս վատ, եթէ ծնողներն իրանք են սովորեցնում և ստիպում իրանց երեխաներին, որ պոռնիկութիւն անեն:

Պետերբուրգում ոստիկանութիւնը երբ գիշերները ման է գալիս բաղանիքները, հիւրանոցները և օթկանները, երբեմն գտնում է 11—14 տարեկան պոռնիկներ, և հարց ու փորձից լմացւում է, որ դրանք աղքատ ծնողների երեխաներ են, մեծացել են առանց վերակացութեան, մեծ մասամբ անզբաղէտ են, միայն վատ օրինակներ են տեսել, և մի քանիսին նոյն խակ իրանց ծնողներն են ստիպել անառակութեամբ պարապել: Միևնոյնը լինում է և ուրիշ մեծ քաղաքներում, օրինակ՝ Լոնդոնում, Պարիզում և այլն:

Շատ անգամ ծնողները իրանց երեխաներին բերում են մօտիկ քաղաքը և մի արհեստի են տալիս: Այդ ժամանակից արդէն աղջիկը օրէցօր ընկնում է, մինչև որ վերջը պոռնիկ է դառնում:

Նա շուտով շատ բան է սովորում իր ընկերուհիներից. կեղծ լուսաւորութիւն է ձեռք բերում. սկսում է նախանձել ընկերուհիների զարդարանքներին ու մանր-մուկ բաներին, և անսպասարատ է գողանի պոռնիկութեան մի նոր զոհ:

Մի քանի արհեստանոցների մէջ էլ նոյն խակ արհեստանոցի տէրերն իրանք են քիչ ու շատ

սիրուն աշակերտուհիներին անառակութեան ճանապարհի վրայ դնում:

Եւ վերջապէս կանանց աշխատանքի ընդհանրապէս չնչին վարձատրութիւնը, ընկերական անարգարութեան այս մեծ շարիքը, մի՞թէ քիչ կանանց է փշացնում: Մանաւանդ որ դրա կըշտին կայ միշտ հեշտ աշխատանք ձեռք բերելու միջոցը, քանի որ կայ կանացի թարմ մարմնի պահանջը: Ահա թէ ինչի՞ է դարձեալ կինն ընկնում, և անառակութեան զոհերի թիւը մեծանում, ու սիֆիլիսը տարածւում:

Եւ իրաւ, բանուորուհիների մեծ մասը գիշեր ցերեկ աշխատում չարչարւում են, առողջութիւնը կորցնում, բայց դարձեալ չեն կարողանում այնքան բան ձեռք բերել, որ իրանց ամենահարկաւոր պէտքերին բաւականութիւն տան: Բայց չէ՞ որ աղքատ մարդն էլ նոյնպէս ապրել է ու գում և լաւ ապրել:

Այսպիսի աղջիկը, կարելի է իր ներսում ծագած շատ հզօր կռուից յետոյ միայն՝ նախ դադարի, ապա և յայտնի պոռնիկ է դառնում: Բայց ինչպէս էլ լինի, դարձեալ մէկով աւելանում է ակամայ պոռնիկների թիւը, պոռնիկների, որոնց կորստեան անդունդն է տանում անզօրութիւնը գոյութեան կռուի մէջ:

Հապա գործարաններն ու գործատները:— Յայտնի է, որ շատ յաճախ գործարանների վարչութեան մարդիկը, սկսած գործարանատէրից ու իր վերատեսչից մինչև աւագ բանուորը այն կար-



ծիրն ունեն բանուոր կանանց մասին, թէ դրանք իրանց հարեմն են, որից կարող են ուղած ձևով օգտուել:

Եւ իսկապէս յաճախ այդպէս էլ լինում է, որքան գեղեցիկ է լինում մի կին, այնքան աւելի է իրան մօտեցնում նրան գործարանի վարչութիւնը: Բայց վայ այն կնոջը, որ այդ իշխանութեան ցանկութիւնը կը մերժի:

Բացի հալածանքից ու ամեն տեսակ նեղութիւններից, այդպիսի կինը կարող է մինչև անգամ իր տեղից զրկուել: Ահա դարձեալ թէ ինչպէս է առաջ գալիս ականայ պոռնկութիւնը:

Արգարե ոչ մի տեղ, ոչ մի գործի մէջ կինն այնպիսի ստրկական կախում չի ունենում իր իշխանութիւնից, ինչպէս գործարանում: Անառակութիւնն այստեղ անասելի ծաղկած է, և քիչ կին կը պատահի, որ անարատ պրծնի: Ահա այս է գործարանի վատ կողմը:

Հապա աղախինները,—դրանք էլ յաճախ ականայ պոռնիկ են դառնում: Բացի ծուլութիւնից, ինչպէս ասում է մի բժիշկ, դրանց պոռնիկանալը առաջանում է և նրանից, որ զիւզից յանկարծ մայրաքաղաք են ընկնում, ուր կին-արմատը՝ զիւզական աշխատանքի հետ համեմատած՝ թեթև գործ ունի, բաւական լաւ վարձ է ստանում, և միշտ աչքի առաջ տեսնում է գայթակղեցնող հագուստ և կապուստ, պանդոկի զուարթ կեանք: Այստեղից աղախինն սկսում է մտածել ուրախ կեանքի և աւելի թեթև վաստակի հա-

մար, ու ցանկանում է, ու պոռնիկ դառնում:

Ընդհանրապէս չի կարելի մերժել, որ շատ 16—17 տարեկան աղախին մի տուփ շաքարեղէնի կամ որ և է դատարկ բանի համար շատ հեշտութեամբ անձնատուր է լինում այս կամ այն տղամարդին. և դժբախտաբար մի տեսակ անտարբեր են վերաբերում դրան, իբրև սովորական բան:

յԴ.

Մեր մինչև այժմ ասածները վերաբերում են հասարակութեան ստորին դասակարգին, բայց բարձր դասակարգի մէջ ևս կանայք ընկնում են, այն էլ ոչ հազուադէպ:

Այս եղելութեան զլխաւոր պատճառներից մէկն է այսպէս կոչուած «ազնիւ օրիորդները» ընտանեկան վատ կրթութիւնը: Իրանք յաճախ փոքրուց լսում են իրանց ազգականների և ծանօթների անազնիւ խօսակցութիւնները, տեսնում են նրանց վատ արարմունքներն ու գործերը՝ չըհասկանալով նրանց խօսածի կամ արածի գեշութիւնը: Անկասկած, կամաց կամաց այս ամենը սովորութիւն է դառնում իրանց համար, և չափահաս ժամանակ արդէն անվայել բան չի թւում աղջկան, այլ ընդհակառակն մի շատ սովորական բան:

Աղջիկն իր շուրջը տեսնում է, որ նոյն իսկ իրանց շրջանի տղամարդիկը միշտ լաւ ու ճոխ հագնուած պոռնիկների ետևից են ընկնում, և



դեռ ևս աշխարհի չարն ու բարին չճանաչելով՝ սկսում է արդէն նախանձել այդ դժբախտ կանանց շքեղ զուգս ու զարդարանքին և նխտ ու կացին:

Այս ամենը խիստ ազդում է աղջկայ երեւակայութեանը և ահագին տպաւորութիւն է թողնում նրա դեռ տհաս մտքի վրայ:

Այսպէս նրա գլխի մէջ կազմւում է այն հասկացողութիւնը, թէ այդ այդպէս էլ հէնց պիտի լինի: Այսպիսի գրութեան մէջ ամեն պատահական դիպուած էլ կարող է արդէն նախապատրաստուած գոհը մոլութեան մէջ ձգել:

Այս կարգի մէջ մտնում են հոգեւորականների, սպաների, բժիշկների, վաճառականների և այլն աղջկերքը:

Այս աղջկերանց դէպի սնկում տանող ճանապարհը սովորաբար հետեւեալ ձևով է կազմուած լինում: Աղջիկը վստահութեամբ անձնատուր է լինում իր երկրպագուին, յաճախ իր փեսացուին, որ սափ-սուտ է լինում: Սա նրան խելամուտ է անում սիրոյ բոլոր վայելքներին և յետոյ ձգում հեռանում է. և աղջիկը ապա սկսում է հետը հետէ աւելի ու աւելի խորը թաղուել անառակութեան տղմի մէջ:

Վրան աւելացրէք և բարեպաշտութիւն չունենալը, ժառանգականութիւնը, աղքատութիւնը, հանգամանքների բերմունքը, կեանքի դատարկութիւնը և այն, որ չորս կողմը ապականութիւն է իշխում,—այս ամենը պէտք է համողիչ լինի, որ

«ազնիւ օրիորդների» շրջանում ևս անկումներ լինում են, այն էլ ոչ սակաւադէպ:

Բացի այդ, կան բազմաթիւ մարդիկ, որոնք ամեն միջոց գործ են դնում, որ պոռնիկութեան մէջ ձգեն մանկամարդ անփորձ աղջկերանց ու կանանց: Դրանք կաւատներն են: Այս սարդերն ինչպէս որսորդ աչքերն իրանց որսի վրայ են պահում, ետեից ընկած հալածում են նրան և շատ անգամ այս կամ այն թարկարդի մէջ են ձգում:

Ոչ մի դասակարգ չկայ, որ այս մարդկանց ձեռքից ազատ մնայ: Նրանք ամեն ծակ ու ծուկ մտնում են, ուր որ իրանց համար յաջող հանգամանքներ կան, և բռնում են իրանց որսը: Այս աղջկորսները մեծ ճարպիկութեամբ օգտւում են աղջկերանց նեղ գրութիւնից և խորամանկութեամբ քաշ են տալիս նրանց դէպի հասարակաց տները:

Արհեստաւոր կանայք, նորատի բանուորուհիներ, տեղ չունեցող աղախիններ, հիւանդանոցից նոր դուրս եկած և անգործ մնացած աղջկերք, արհեստանոցից արձակուածներ, գրասենեակիների միջոցով տեղ փնտրողներ, բանտարկեալների կամ աքսորեալների աղջկերք, որբեր և այլն և այլն,— ահա թէ ինչի վրայ են աչք սնկած ամեն տեղ որոնում «կենդանի ապրանքի» այս առուտուր անողները, և երբ որ իրանց որսը գտնում են, ասում է Օտտօ-ամ-Ռինը, մեծ յաջողութեամբ սկսում են գործել:



Այդ կաւատները թշուառների աչքի առաջ դնում են մի ուրախ ու ճոխ կեանքի կախարդական պատկեր. ցոյց են տալիս արդէն ընկած և մոլի կեանքով ապրող աղջկերանց արտաքին հարուստ վիճակը. միւս կողմից այդ խեղճերի առաջ ցցուած է կարիքը, աղքատութիւնը, վատառողջութիւնը և նոյն իսկ աշխատանքից յետ սովորած լինելը, — անա այս բոլորը միասին աղջկերանց մատնում է կաւատների ձեռքը, որ նրանց ծախում են հասարակաց տներին, ուր արդէն պարապուծիւնն և մշտական արբեցողութիւնը շուտով իրանց բանը տեսնում են և այդ թշուառականներին դարձնում են արհեստով պոռնիկ:

Եւրոպայի, բայց աւելի ճիշտ, ամբողջ աշխարհի բոլոր մեծ քաղաքներում կան անազին թուով գործակալներ, որոնք պարապում են «կենդանի ապրանքի» որսորդութեամբ և առևարով, և առևտուրն անում են անազին չափերով:

Տեղ որոնելու համար գրասենեակներ էլ կան, որոնց գործունէութիւնը չափազանց խայտառակ է. այդ գրասենեակները հասարակաց տներ պահողների և կաւատների ժողովատեղն է: Գժբախտաբար, տեղ գտնելու համար այս գրասենեակներին են դիմում նաև դաւառներից եկած ջանիլ անփորձ աղջկերքը և անխուսափելի կերպով գոհ են դառնում պոռնիկութեան:

Ահա այն գլխաւոր պատճառները, որ աղջկերանց ձգում են պատահական պոռնիկների շարքը: Եւ մի անգամ արդէն այդ կեանքի ցեխի

մէջ թաղուելով, նրանք թէկուզ դժուար են կարողանում հաշտուել այդ կեանքի հետ, բայց կամքի թուլութիւնից միջիցը դուրս գալ չեն կարողանում, աշխատանքից յետ են սովորում: Իսկ պոռնիկ կոչուելու բիծը, այս բոլոր կեանքը, որ իրանց միջին շատ լաւ զգում են, այնպէս արատաւորում, ձգում է այդ աղջիկներին հէնց իրանց աչքին, որ այլ ևս վախենում են տեղից շարժուել:

Այս ամենին օգնութեան է հասնում ամենօրեայ արբեցողութիւնը, որից աչք չեն բաց անում և միջոց չեն ունենում, որ խելքները գլուխները ժողովեն ու իրանց վիճակի վրայ մտածեն:

Ո՞րքան շատ կը գտնենք աշխարհի երեսին ու բոլոր քաղաքներում այսպիսի պոռնիկներ, եթէ միայն կարողանանք լաւ հասկանալ ու հաշիւ տալ այն ամենի մասին, ինչ որ ասացինք:

ԺԵ.

Տեսնում ենք, որ պոռնիկութիւն անող աղջկերանց թիւը շատ մեծ է. այն էլ ոչ այնքան հասարակաց տներում են, որքան իբրև գաղտնի պոռնիկներ փողոցներում թափառում են:

Կասկած չկայ, որ եթէ շատ կանայք կան, որ այդպիսի պարապմունք ունեն, սրանով պարզ ապացուցւում է, որ պոռնիկների մեծ պահանջ կայ. որովհետև եթէ պահանջ չլինէր, առաջարկութիւն էլ չէր լինիլ:



Ակնյայտնի է, ուրեմն, որ պոռնիկութիւնը ժողովրդի կեանքի երևոյթներից մէկն է, որ պահպանուում է մի կողմից բնածին պոռնիկներով, որոնք, ինչպէս տեսանք, բոլոր ազգերի մէջ միշտ եղել են և կան. միւս կողմից նրանով, որ ամուսնութիւնը գնալով պակասում է, և ամեն կիւն էլ չի կարողանում իր աշխատանքով ապրուստ ճարել. իսկ չպատկուած տղամարդիկ էլ վատ ու պատիր կրթութեան պատճառով իրանց սեռական կրքերին բաւարարութիւն տալու համար՝ ման եւ գալիս գտնում են ազատ կանայք, որոնց թիւն այնպէս շատ է:

Պոռնիկութեան իսկական հիմնական պատճառներն ուրեմն, միևնոյն պատճառներն են, որոնցով շատ կանայք չեն կարողանում կեանքի մէջ իրանք իրանց գլխու ապրել, իսկ տղամարդիկ էլ կարիք ունեն կանանց ծախու սէրին \*):

Այսպէս, ուրեմն, պոռնիկութիւնը գոյութիւն ունի ոչ թէ նրա համար, որ հասարակաց տներ կան, այլ որ մի շարք պատճառներ կան, որոնք առաջ են բերում այն:

Կրկնում ենք, որ վերևում ասածներից պարզ երևում է, որ թոյլատրուած հասարակաց տները փակելով պոռնիկութիւնը չի ոչնչանալ:

Կարելի է ամեն տեղ փակել հասարակաց

\*) Տղամարդկանց այս կարիքի մասին տես իմ գրքերը. «Ի՞նչ է անատակութիւնը», «Ի՞նչ է ժուժկալութիւնը» և «Կինը և տղամարդը»:

տները, ասում է մի իմաստուն գիտնական, կարելի է դրակոնեան օրէնքներ հանել և շնութեան համար մահուան պատիժ տալ, բայց օրէնքը միշտ մեռած տառ կմնայ, քանի դեռ հասարակութիւնը հարկաւոր է համարում ամուսնութիւնից դուրս յարաբերութիւններ ունենալ:

Եւ եթէ անկասկած է, որ ամեն ազգի մէջ ևս պոռնիկութիւնը ոչ միայն այժմ կայ, այլ ևս ապագայում էլ կլինի, մի՞թէ ժողովրդի բարոյականութեան և հասարակութեան համար աւելի լաւ չէ, որ պոռնիկութիւնը այս նպատակի համար որոշուած առանձին տներում կենտրոնանայ:

Եթէ պոռնիկութիւնն անխուսափելի չարիք է, հասարակութեան համար ամենից լաւն այն կը լինէր, որ պոռնիկութիւնը թոյլատրուէր միայն հասարակաց տներում, և որ թոյլատրուած հասարակաց տներն այն չլինէին, ինչ որ են այժմս: Դրանով ժողովրդի բարոյականութիւնը անկասկած աւելի կը լաւանայ:

Մի անգամ որ ուրիշ ճար. չկայ, շատ ցանկալի է, որ հասարակաց տները ամբողջապէս վերակազմուեն խիստ բժշկական և առողջապահական սկզբունքների հիման վրայ, և որ այժմեան այնտեղ իշխող գերութիւնը ոչնչանայ, ազլկերքը կեանքի ազատութիւն ստանան, միշտ հնարաւորութիւն ունենան այնտեղից դուրս գալու և իսկական աշխատանքի ճանապարհը բռնելու:

Քանի որ պոռնիկութեան գոյութիւնն անկասկածելի է, փոքրագոյն չարիքը այս կլինէր: Բացի



այդ, դրանով որչերի ու փողոցների անառակութիւնը քիչ ու շատ ճնշուած կը լինէր, և թերևս ամբողջ պոռնիկութիւնը խելացի կերպով շինուած հասարակաց տների մէջ փակուէր...

Թոյլատրուած հասարակաց տների դէմ են մի քանիսը նրա համար, որ իբր թէ այդ հաստատութիւնների պոռնիկներից շատ աւելի հեշտ կարելի է վարակուել սիֆիլիսով, քան թէ գաղտնի անառակութեամբ պարապող կանանցից. բայց այդ ճշմարիտ չէ: Թոյլատրուած տների մէջ սիֆիլիս երևան է գալիս 50<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ գաղտնի պոռնիկների մէջ 90<sup>0</sup>/<sub>0</sub>:

Մի ֆրանսիացի բժշկի կարծիքով, որ և շատ ճիշտ է, եթէ վերջին ժամանակներս նկատուում է, որ հասարակութեան մէջ սիֆիլիսով հիւանդացողների թիւը շատանում է, այդ նրանից է, որ ազատութիւն է տրւում գաղտնի պոռնիկութեանը:

Նշանաւոր բժիշկ Մօօրիակը հաստատում է, թէ Պարիզում սիֆիլիսով հիւանդացող տղամարդկանց ամենամեծ բազմութիւնը գաղտնի պոռնիկներից են վարակուում: Միևնոյնը նկատուում է և ֆրանսիական Լիօն քաղաքում, այլ և Մոսկուայում՝ մի ուսս բժշկի դիտողութիւններով:

Ի դէպ, կարելի է ասել, թէ գաւառական քաղաքներում շատ աւելի են վարակուում սիֆիլիսով, քանի որ այնտեղ մեծ մասամբ մասնագէտ բժիշկներ չեն հասարակաց տների վրայ հսկողները: Այս պատճառով այդ տեղերից սիֆիլիսն

արագ տարածւում է և կորստեան մատնում ամբողջ քաղաքներ, ազգեր ու տէրութիւններ: Որտեղ հսկողութիւն չկայ, այնտեղ կը ծաղկի սիֆիլիսը:

Թոյլատրուած տներում, ընդհանրապէս, շատ աւելի պակաս է սիֆիլիսաւոր կանանց թիւը. բացի այդ, կանայքը գտնուում են մասնագէտ բժշկի հսկողութեան տակ, որ շաբաթը երկու անգամ մտիկ է տալիս ամեն կնոջ:

Հասկանալի է, որ այստեղ էլ մեծ ապահովութիւն չկայ սիֆիլիսով չվարակուելու համար: Հասարակութիւնն իսկապէս խաբւում է կարծելով, թէ մտիկ տուած կանայքն առողջ են. մինչդեռ նրանք վարակուած լինելով, սարսափելի թոյնը պատուաստում են ուրիշների մէջ:

Իրողութիւնն այն է, որ ոչ ոք և ոչ մի ժամանակ չի ասիլ, որ հսկողութեան տակ գտնուած կնոջից չի կարելի վարակուել: Բժշկի պաշտօնական թուղթը տրւում է միայն այն մտքով, թէ բժշկի մտիկ տուած կինը մտիկ տալու ընդէն կարեք չունի իբրև հիւանդ բժշկուելու. ուստի և այդ թղթից մի բան միայն կարելի և պէտք է իմանալ, այն է՝ մտիկ տուած կնոջից աւելի քիչ կը պատահի որ մարդ վարակուի, քան թէ մի պոռնիկից, որ հսկողութեան տակ չէ:

Ս.յսինքն, դժուար թէ սիֆիլիսով վարակուելու աւելի պակաս ենթակայ լինի այն մարդը, որ յարաբերութիւն ունի մի կնոջ հետ, որ երբեմն ինքն էլ չի իմանում, թէ սաստիկ վարակուած



է, քան թէ նա, որ այնպիսի կնոջ հետ է յարաբերութիւն ունենում, որին մտիկ են տալիս և հասարակաց տունը չեն թողնում, նոյն իսկ եթէ մարմնի վրայ ամենափոքր քերծուած ունենայ:

Մթթէ բժիշկը՝ որ սեռական գործարանների վրայ թեթե քերթուածներ ու պատառուածներ տեսնելով՝ հեռացնում է պոռնիկին, գրանով չի պահպանում աղջկան սիֆիլիսով վարակուելուց, որը յետոյ կարող է նա ուրիշներին տալ:

Մթթէ բժիշկը՝ մեծ շափով վարակիչ նշաններ ունեցող պոռնիկին իր գործից հեռացնելով՝ սիֆիլիսից չի ազատում շատերին, որոնք կարող էին նրա հետ մերձաւորութիւն ունենալ:

Ինչ որ գաղտնի պոռնիկների սիֆիլիսով վարակուած լինելուն է վերաբերում, նրանցում կարելի է սովորաբար սիֆիլիսի այնպիսի սաքսափելի, անխնամ թողած և ամենից վարակիչ երեւոյթներ գտնել, որ նոյն իսկ բոլորովին երևակայել կարելի չէ թոյլատուած տների աղջկերանց համար:

Այժմ հարց է. ո՞վ է աւելի վնասակար: Ա՞յն աղջիկը, որ անխնամ թողած վարակիչ սիֆիլիս ունի, թէ՞ այն աղջիկը, որ այս հիւանդութեան ոչ մի արտաքին երևոյթ չունի:

Կարո՞ղ է արդեօք մարդ վարակուել թոյլատուած հասարակաց տան պոռնիկից:— Անշուշտ կարող է. բայց աւելի պակաս հաւանականութեամբ, քան թէ մենաբնակ պոռնիկից:

Այս սիֆիլիսի վերաբերմամբ. հապա շանկըը,

որ միշտ աւելի սաստիկ ձևով ունեն գաղտնի պոռնիկները:

Այսպէս, ուրեմն, պոռնիկ կանանց պարբերաբար մտիկ տալը անկասկած շատ յաճախորդների որոշ աստիճանով պահպանում է վարակուելուց, ուստի և հասարակաց տների կանանց բժշկական քննութիւնները պէտք է լինեն և անպայման նշանակութիւն ունեն:

Այս եզրակացութիւնը հաստատուած է և նրանով, որ ամեն անգամ երբ պոռնիկների հրակողութիւնն ու քննութիւնը ոչնչացրել են, բոլոր տէրութիւններում ժողովրդի մէջ արագ ու սաստիկ աճել են վեներական ախտերն ընդհանրապէս և սիֆիլիսը մասնաւորապէս: Այս մասին շատերն ունեն գրած, յատկապէս պրոֆեսոր Տաւնովսկին:

Ժ. Զ.

Եթէ պոռնիկ կանանց մտիկ տալը ցանկալի և օգտակար է համարուած, հասկանալի է, որ անարդարութիւն է՝ նրանց հետ միասին յանցանք գործող աղամարդկանց ևս բժշկական քննութեան չենթարկել և հսկողութիւնից բոլորովին ազատ թողնել:

Այս նկատմամբ շատ փորձեր և առաջարկութիւններ են եղել զիտութեան կողմից, բայց, դժբախտաբար, գործնականի մէջ ոչինչ առաջ չի եկել՝ շատ պատճառներով: Օրինակ՝ այդ հաստա-



տութիւնները պահողները կարող են իրանց եկամուտը շատացնելու համար առանց վկայականի էլ յաճախորդներ ներս թողնել. ո՞վ պէտք է հսկի այդ բանին:

Յաճախորդը կարող է հիւանդ լինել, բայց իր առողջ բարեկամի վկայականն առնել և առողջ ձևանալ. միւս կողմից վկայական տուող բժիշկին և կարող է ձեռնահաս չլինել սիֆիլիս ճանաչելու համար:

Վերջապէս ասում են, թէ հասարակաց տուն մտնել ցանկացողը հէնց այնտեղ հասարակաց տանը կարող է նախ քննութեան ենթարկուել: Բայց այս միջոցն ևս դժուար իրագործելի է:

Կրկնում ենք, այս ամենը մեծ օգուտ կը բերէր և, կասկած չկայ, որ չնայելով որ շատ բան ի չարը կը գործադրուէր, բայց դարձեալ բաւական կը պակասեցնէր հասարակաց տների կանանց սիֆիլիսով վարակուելը:

Ընդունելով, որ պոռնկութիւնն ազդերի կեանքի մի այնպիսի երևոյթ է, որ վերացնել չի կարելի, կրկնում ենք, որ կարելի է հասարակութեան համար տանելի շրջանակի մէջ դնել այն, բայց ոչ թէ հսկողութիւնը ոչնչացնելով, այլ լաւ կարգ ու կանոնների մէջ դնելով: Իսկ այս արդէն կառավարութեան, պետութեան գործն է:

Կեանքի իդէալն այն է, որ ամեն մարդու թոյլ արուի իր ուզած ձևով ապրել, եթէ միայն դրանով ուրիշ մարդկանց կեանքի հիմնական պայմանները չեն խանգարուում:

Ուստի, եթէ պոռնիկն իր մարմինը ծախելով իր ուզած ձևով ապրում է, բայց դրանով վարակում է ուրիշ մարդկանց, կընշանակէ նա իր առողջութեան նկատմամբ պէտք է հսկողութեան տակ դրուի, որ և որոշ աստիճանով վարակման առաջը կանսի, և պոռնիկը, որքան կարելի է, քիչ վնաս կը պատճառի ուրիշներին:

Որովհետև պոռնկութիւնը եղել է և կայ բոլոր ազգերի մէջ և բոլոր ժամանակներում, պէտք է կարգ ու կանոնի տակ դրուի, որպէս զի մի քանիսի համար անհրաժեշտ լինելով հանդերձ՝ ուրիշներին չվնասի՝ նրանց առողջութիւնը խանգարելով և ժողովրդի բարոյականութիւնը ոչընչացնելով:

Այստեղից պարզ է, որ աւելի լաւ է, որ ամբողջ պոռնկութիւնը այս կամ այն քաղաքի որոշ տներում փակուի, քանի որ սրանով անառակութիւնը կը պակասի և ժողովրդի բարոյականութիւնը կլաւանայ: Եւ այս, ի հարկէ, փոքրագոյն չարիքն է:

Թոյլատրուած տները միայն կարող են նպատակ հասարակական պարկեշտութեան պահանջմանը: Եթէ այդպիսի տներ կան, միայն այդ ժամանակ խորհուրդ ունի փողոցային, որջային ու մենաբնակ պոռնկութեան խիստ հալածանքը, որովհետև հասարակաց տներն այդ դէպքում պոռնկութեան համար իբրև ելք են ծառայում. իսկ առանց այսպիսի ելքի անհնար է կուռել պոռնկութեան դէմ և քաղաքից դուրս քշել այն.



անհնար է պարզապէս այն պատճառով, որ եթէ տեղ չկայ, ո՞ւր պիտի կորչի, գնայ:

Բաւական է, որ մարդ տեսած լինի, թէ ինչպէս մեծ քաղաքներում այս թշուառ կանանց ետեից ընկած որսում են, այն ժամանակ լաւ կը հասկանայ մեր բոլոր ասածը և խորը կը թափանցի արդի կեանքի ամբողջ կազմութեան մէջ:

Բոլոր դարերի և ազգերի պատմութիւնը բոլորովին ակնյայտնի վկայում է, թէ հասարակաց տներն անհրաժեշտ են. մի և նոյն պատմութիւնը ցոյց է տալիս, որ ամեն անգամ, երբ հասարակաց տները փակել են, դառն փորձերով դարձեալ համոզուել են, թէ անհրաժեշտ է բանալ:

Հասարակաց տները փակելու հետեանքը միշտ այն է լինում, որ գաղտնի պոռնկութիւնը զարգանում է, ամուսնութիւնից դուրս ծնունդների թիւը մեծանում է, առաջ են գալիս արգանդի պտուղն ոչնչացնելու յանցանքն ու մանկասպանութիւն, առանձնապէս տարածւում է սիֆիլիսը, հասարակական բարոյականութիւնն ու ապահովութիւնը վնասւում է: Ընդհակառակն՝ երբ նորից բացւում են հասարակաց տները, այս բոլոր տխուր երևոյթները հնարաւորութեան աստիճանի չափ պակասում են:

Մի գիտնական բժիշկ, որ շատ զրուածքներ ունի Պարիզի պոռնկութեան և անառակութեան մասին, ասում է, թէ իշխանութիւնը պէտք է հսկի պոռնկութեանը, ամեն հնարաւոր միջոցներով նրա տխուր հետեանքները առաջն առնի,

Ինչպէս էլ լինեն գործնական նկատումները, դարձեալ միշտ պէտք է յիշել, որ բարոյական և պետական օրէնքի առաջ ամենքը պէտք է հաւասար լինեն, թէ տղամարդ, թէ կին, թէ պոռնիկ և թէ կրօնաւոր և այլն:

Մենք չենք աշխատում օգնել կնոջն իր անկումից առաջ, աւելի ևս պակաս ենք օգնում պոռնիկին բարոյապէս և նիւթապէս, և ապա՝ միայն սխալ հասկացողութիւնից, մեր թանկագին առողջութեան հոգը տանելով, սպանում ենք կնոջ մէջ մարդկութիւնը և աշխատում ենք, որ նա դուրս չգայ և չկարողանայ դուրս գալ իր անկեալ վիճակից:

Առաջ գնանք: Պոռնիկի ձեռքից առնում են վկայականները և տեղը տալիս են մի խայտառակ անցազիր: Նա ոստիկանութեան հսկողութեան տակ է ապրում և եթէ կամենում է պատուաւոր կեանքի վերագառնալ, նրան, թէպէտ ոչ ամեն տեղ, տալիս են մի այնպիսի անցազիր, որի մէջ զրուած է լինում, թէ առաջ ինչով է պարապել:

Դարձեալ, տեղից վեր կացողը պոռնիկին հարստահարում է: Նրան կարելի է առանց դատաստանի զրկել ազատութիւնից: Ով ուզում է, ծեծում է նրան, թէ «հիւրը», և թէ այն ամենքը, որոնցից կախումն ունի նա: Ընդհանրապէս կարելի և թոյլատրելի է համարւում ամեն տեսակ անիրաւութիւն հասցնել պոռնիկին:

Պոռնիկները գլխին մինչև անգամ «որսոր-



դուժխն» էլ են սարքում, ինչպէս վայրի գա-  
զանների գլխին:

Շրջապատում, պաշարում են քաղաքի մի ու-  
րոշ թաղը, որտեղ ճաշարաններ ու պանդոկներ  
կան, կամ թէ նոյն իսկ մեծ փողոցներն ու բու-  
լուարները կտրում են, և ամեն պատահած կին  
բռնում տանում ոստիկանատուն, այստեղից էլ  
հիւանդանոց, ուր նրանց քննում են:

Ի՞նչ ասել կուզէ, որ այդ բռնուածները  
մէջ պատահմունքով կամ սխալմունքով ընկնում  
են պատուաւոր կանայք ու աղջիկներ: Եւ ի՞նչ  
սարսափելի տեսարան ասես, որ այդ ժամանակ  
չի բացւում մարդու աչքի առաջ: Ի՞նչ ողբ ու  
կոծ ասես, որ չեն բարձրացնում այս բռնուած-  
ների բազմութիւնը, որ իրանց «հասարակական  
խառնուածքի թշուառ գոհերի» իրաւունքն էլ ոչ  
մի ուրիշ կերպ չեն կարողանում պաշտպանել:

Այս ամենն, ի հարկէ, պոռնիկի մէջ սպանում  
է մարդկութիւնը: Նա բողոք է բարձրացնում և  
ժամանակի ընթացքում վերջապէս անշուշտ մի  
գառնասիրտ, լիտի արարած է դառնում, և իր  
մարդկային արժանապատուութեան ստորացման  
համար՝ իր կարողացած ձևով հասարակութիւնից  
վրէժ առնել է ուզում:

Նա երբեմն ազդու կերպով էլ է բողոքում  
իր վիճակի դէմ, բայց ո՞վ է ուշադրութիւն դարձ-  
նում, թէ ինչ է մտածում և զգում ինքը պոռ-  
նիկը:

Վերցնենք թէկուզ այս փոքրիկ օրինակը:

Ռուսաստանում կան մի քանի ընկերութիւններ,  
որոնք հիմնուած են անառակութեան դէմ կռուե-  
լու և պոռնիկներին պաշտպանելու համար: Կայ  
և սուրբ Մագթաղինէի անունով մի ընկերութիւն:  
Բայց այս ընկերութիւնների գործունէութեան  
հետևանքները դեռ գրեթէ չնչին են \*):

Այսպէս թէ այնպէս, այս ընկերութիւնները  
նշանակութիւն ունեն դարձեալ կնոջ անկումից  
առաջ:

Կասկած չկայ, որ պոռնիկների «քննութիւն-  
ները» լաւ կողմեր էլ ունեն, բայց կրկնում ենք,  
քննութիւնները սուտ վստահութիւններ են տա-  
լիս հասարակութեանը, իբր թէ լիովին ապահով  
են հիւանդանալուց: Բայց հարց է, թէ մենք  
աղամարդիկս արդեօք քննել տալիս ենք մեզ...

Այս ապահովութիւնը չկայ: Ուստի թող ա-  
մեն մարդ, ամեն երիտասարդ միտը պահի, որ  
ամեն ժամ, ամեն րոպէ վտանգի մէջ կըլնէ իր  
առողջութիւնը, գուցէ և իր կեանքը, երբ պոռ-  
նիկի հետ գործ ունենայ. մինչ ժուժկալութիւնը  
ոչ մի փաստ չունի:

Սիֆիլիսի դէմ կռիւը կարող է լինել անհա-  
տական և հասարակական. կարող է լինել նախա-  
զգուշացման կռիւ՝ նրանց համար, որ հիւան-  
դութիւնից ազատ մնալ են ուզում, և «գոյութեան»  
կռիւ՝ նրանց համար, որ դժբախտութիւն են ու-  
նեցել արդէն հիւանդացած լինելու:

\*) Տես իմ գիրքը՝ «Կարեք և բարեգործութիւն»:



Հիւանդ կինը հիւանդանոցում քիչ ու շատ կանոնաւոր բժշկուում է, իսկ «ազատ աղամարդը» մի կերպ բժշկուելով՝ իսկոյն իր համար նոր գոհեր է գտնում:

Նախազգուշացումն առանձին անհատների համար լինի, թէ բոլոր հասարակութեան, նախազգուշացման կռուի հիմքը մարդուս ֆիզիկական և բարոյական առողջապահութեան մէջ պէտք է լինի: Մարդ պէտք է ընդհանրապէս ամուսնութիւնից առաջ քաջ ծանօթ լինի առողջապահութեան և մանկավարժութեան հիմունքներին, որպէս զի կարողանայ կանոնաւոր կրթութիւն տալ երեխաներին:

Բայց եթէ մարդ խմում, հարբում է, ապա «զբօսնելու» է գնում հասարակաց տունը կամ ուր որ պատահի, և կեղտի մէջ թաղուելով իր մարդկութիւնը կորցնում, դառնում է անբան անասուն, — մեղքը իր վիզը, թող ինքը իր գլխովը տայ:

Ո՛վ կանոնաւոր կրթութեան սուրբ գործ:

Թող մեր երեխայքը մարդուս բնախօսական կեանքի մասին ոչ թէ աղախիններից և իրանց փշացած մեծ ընկերներից բան սովորեն, այլ իրանց ծնողներից ու դաստիարակներից: \*)

Ամեն չարիք պէտք է արմատախիլ անել և ոչ թէ ճիւղերը միայն կտրել: Պէտք է, ուրեմն, և

\*) Տես իմ գիրքը՝ «Մտերմական խորհուրդներ պատանիներին»:

պոռնկութեան ծնող պատճառների քննութեան մէջ մտնել, և եթէ կարելի է՝ արմատից կտրել այդ մեծ չարիքը:

Պէտք է աշխատել, աշխատել անվերջ և անդադար...:

Բնց արէք կնոջ համար նոր աշխատանքի դռներ. բարձրացրէք նրա աշխատանքի գինը. ապաստարան շինէք նրա երեխաների համար. կանոնաւոր առողջապահական միջոցներ ձեռք առէք. կազմեցէք ընկերութիւններ, դաշնակցութիւններ, որ ժողովրդի ստորին խաւերի մէջ անգամ գործունեայ կերպով քարոզեն, թէ սիֆիլիսը՝ արբեցութեան և թոքախտի հետ միասին մարդկութեան ամենամեծ թշնամիներն են. աշխատեցէք հոգեպէս բարձրացնել ստորին մասի անազին բազմութիւնը. աշխատեցէք բարւոքել և նրա տնտեսական դրութիւնը, չարիքի դէմ ընդհանրապէս կրթական և մտաւոր մշակութեան կռիւ վարեցէք, — դուք կրտսեսէք, թէ ինչպէս լաւ հետեւանքներ իրանք իրանց երևան կը գան:

Դժբախտաբար, պոռնկութիւնն այնպէս շուտ չի անհետանում և կանհետանայ միայն այն ժամանակ, երբ ազգերի ընդհանուր եղբայրութեան գաղափարը յաղթանակ կը տանի. երբ ոչ զօրաբանակ կը լինի, ոչ նաւատորմիդ. երբ ոչ ազգատ կը լինի, ոչ սոված. երբ տղամարդիկ, ինչպէս և կանայք, ամուսնութիւնից առաջ ողջախո՛ծ ու ժուժկալ կը մնան:

Իսկ առայժմ յոյս ունենանք, որ ոչ թէ տե-



սական ու վերացական միջոցներով, այլ կեանքը զիտելով և հասարակութեան մէջ հէնց պոռնկութեան երևոյթի առաջ գալը ու արհեստով պոռնիկ կանանց տիպը պարզելով ու հասկանալով՝ կամաց կամաց միջոցներ կը գտնենք, որ կարիք ունեցող կանանց անտէր ու անճար չթողնենք անկումից առաջ, և ազգերի մէջ շարունակ աճող պոռնկութեան երևոյթը կը կանոնաւորենք, որից և պէտք է շատ պակասի սիֆիլիսի տարածուելը հասարակութեան մէջ...

ՎԵՐՋԻՆ ԽՕՍԸ

Քանի դեռ մի նոր բարոյական բարենորոգում չի վերածնել մեր կեանքն ու «մեր մտաւոր մշակութիւնը» և մեր՝ քաղաքակրթութիւնը, որ արդէն սկսել է այնքան շատ նման դառնալ մեռած Հոմի քաղաքակրթութեանը. քանի դեռ այդ վերանորոգութիւնը չի բարձրացրել կնոջն իր ընկերական անկեալ վիճակից, նրան իրաւունք չի տուել «ոգի կենդանի» լինելու և մեր անտեսական նիստուկացի մէջ ուրիշ տեղ բռնելու, քան ինչ որ ունի այժմ—քաղաքատնտեսական լեզուով ասած—իբրև «առաջնակարգ պիտոյքի առարկայ», քանի դեռ կինը միեւնոյն կարգի մէջ կը լինի, ինչ որ գինին, հացը, աղը, միսը, սուրճը, թէյն ու մարդու բնական պիտոյքների համար բանեցրած ուրիշ առարկաններ, — միշտ էլ անստան ու անդրդուելի կը մնան

դժբախտաբար պոռնկութիւնն և պոռնկութեան ստրկութեան վաճառանոցները:

Կարելի է առարկողներ լինեն, թէ այդ անցել է արդէն և թաղուել, կորել է հարեմների մոայլի մէջ. կինն այժմ այլ ևս մի իրեղէն չէ, և ոչ էլ մի կտոր միս: Այդ վաղ էր, որ այդպէս էր:

Կարելի է առարկողներ լինեն, թէ մենք այժմ բարձրացրել ենք ընտանեկան վիճակը, ստեղծել ենք կնոջ աշխատանքի խնդիրը, առաջ ենք տարել մարդու և կնոջ հաւասար իւաւունքների ձգտումը...

Բայց արդեօք ճշմարիտ է, որ մենք բարձրացրել ենք կնոջ ընտանեկան վիճակը:

Խղճմտանքով ասենք, կին-մարդը իր մարդու կինն է մինչև այսօր. իր մարդու կինն է միայն, քանի դեռ մարդն այդ կամենում է: Եւ մայրն իր դաւակների դաստիարակն է, դարձեալ քանի դեռ մարդն այդ ուզում է:

Մարդն իրաւունք ունի սիրելու կամ չսիրելու իր կնոջը. կարող է բաժանուել իր կնոջից և նրան առանձին անցագիր և այս կամ այնչափ դրամական ապրուստ տալ. կարող է նրան զօրով իր մօտ բերել տալ, — իսկ կինն անկարող է մարդուն նման միջոցներով պատասխանելու:

Կինն անձնիշխան չէ մինչև անգամ իր պարտականութեան և կայքի իրաւունքի վերաբերմամբ. որպէս զի կնոջ մտերհակը մի բանի տեղ անց կենայ, պէտք է մարդու ստորագրութիւնն էլ լինի:



Եւ վերջապէս ի՞նչ արժէք ունի կնոջ դրու-  
թեան կարծեցեալ բարձրանալն ընտանիքի մէջ,  
քանի որ տարէցտարի կեանքը թանգանում է, և  
շարունակ աւելի ու աւելի դժուարանում է ըն-  
տանիքի պահպանութիւնն ու կանոնաւոր գոյու-  
թիւնը:

Շարունակ ամեն կողմից լսում ենք. «Ապրելը  
դժուարացել է»:

Շարունակ տեսնում ենք, թէ ինչպէս ապ-  
րուստի պակասութեան պատճառով ընտանիք է,  
որ քանդուում է. թէ ինչպէս հետզհետէ աւելի  
մեծանում է հասած ազապ աղջկերանց թիւը. թէ  
ինչպէս երիտասարդներն իրանց գլուխը հոգսից  
ազատ պահելու համար ամուսնութիւնից փախչում  
են՝ հետևելով թուրքի առածին թէ «կին առայ՝  
մի բալայ. նրանից եղաւ մի բալայ. հնա՛ բալայ է  
ու բալայ»:

Տեսնում ենք, թէ ինչպէս շատ մայրեր ար-  
տասուք են թափում, երբ իմանում են, թէ յղա-  
ցել են, մի յղութիւն, որ «աւելորդ է և իրանց  
հաշուի մէջ չի եղել», որովհետև աչքի առաջ  
ունենաւ ազատուելու ցաւերն և երեխան մեծա-  
ցնելու դժուարութիւնն ու ծախսը: Տեսնում ենք  
և զանազան թաքուն տատմէրները ու խաբեբա-  
ների յանցաւոր ծառայութիւնները արգանդի պը-  
տուղը ոչնչացնելու համար...

Մի հասարակութեան մէջ, ուր կինը ստի-  
պուած է երեխայ բերելուց հրաժարուել — այլ ևս

մի՞թէ կարելի է ասել, թէ կնոջ ընտանեկան  
դրութիւնը բարձրացել է:

Դուք կանանց զրկում էք մայր դառնալուց,  
որ բնութիւնը նախասահմանել է նրանց համար.  
բայց կինը եթէ մայր չէ, նա կամ ձեր զուար-  
ճութեան առարկան է, կամ աղախինը, որ ձեր  
տանու աշխատանքն է անում:

Դուք նրան չէք ծեծում, ինչպէս ձեր նախ-  
նիքները. դուցէ նա մինչև անգամ իշխում էլ է  
ձեր վրայ, բայց իշխում է ոչ թէ «ընտանիքի  
մօր» բարոյական իրաւունքի ուժով, այլ այն  
օրէնքով, որով, ինչպէս ասում է մի գիտնական,  
ձեր քմահաճոյքները, ձեր սրտի ուզած խաղալիք-  
ներն էլ ձեզ իրանց ծառան են դարձնում:

Մի հասարակութեան մէջ որ կնոջ ընտանե-  
կան իրաւունքները բարձր լինէին, անշուշտ ան-  
հասկանալի կը լինէր այն ազադակը, որ Եւրո-  
պայի բոլոր պետութիւնների մէջ բարձրաձայն  
լսելի է լինում ամուսնալուծութեան ազատու-  
թեան համար, և կամ մի՞թէ այնպէս դէպի քա-  
ղաքացիական ամուսնութիւն կը ձգտէին, — մի  
բան, որ նկատելի է հասարակութեան բոլոր խա-  
ւերի մէջ և որ այժմեան կեանքի քայքայումն է  
ցոյց տալիս:

Մի անգամ որ ընտանիքի միջից հանել ենք  
մեր մայր-կինը, էլ ի՞նչ հարկաւոր է մեզ լաց  
լինել, թէ տան տիկին ասածը այլ ևս չկայ, թէ  
տան օջախի կրակը հանգչում է: Մի՞թէ զարմա-  
նալի է, որ մի քանի տարուայ ամուսնութիւնից



յետոյ անգաւակ կլինը, մուայլ հողով ու սառն սրտով, տանը նստած, անգործութիւնից կատարում է. մի կին, որ, ի միջի այլոց, կրթուած չէ և ընկերսիրական զգացմունքներով, և որ երբեմն գուցէ միայն նրա համար չէ իսկական կոկետ, պշրուհի դառնում, որ դեռ յարմար օրը չի եկել...

Հապա «ապօրինի» մայրութեան խայտառակութիւնը: Բն սուր է տղամարդը, այս կնոջ սիրահարը, այս երեխայի հայրը:

Ո՛հ, նրա դերը սքանչելի է եղել սկզբից մինչև վերջը,—նա սկսել է կնոջը մոլորեցնելով:

Տեսնէ՛լ էք արդեօք երբ և իցէ մի սիրուն, անմեղ աղջիկ, թէ ինչպիսի յափշտակութեամբ, սիրոյ և բարութեան գաղափարներով լցուած, կեանքի մէջ չի լսում ու տեսնում տղամարդկանցից, մեծից ու փոքրից:

Ամենքը հայեացքներով, հասարակ ու զարդարուն խօսքերով, տածումներով ու ետևից ընկնելով այն են միայն յայտնում աղջկան, թէ նա զեղեցիկ է, տենչալի է և, սի, ինչքան լաւ կը լինէր, որ ձեռներն ընկնէր...

Ահա երևում է և «նա», այն տղամարդը, որ միւսներից աւելի համակրելի է. իր «կիրքն ու սուփանքը» նա թաքցնում է վսեմ սկզբունքների, ազնիւ մտքերի և բուռն զգացումների գեղեցիկ շղարշի տակ:

Բայց նա միանգամայն և սովորեցնում է աղջկան ընտանի մերձաւորութիւն ունենալ տղա-

մարդի հետ, վարժեցնում է նրան իր փաղաքշանքներին, որ զնալով աւելի կըքոտ են դառնում:

Վերջապէս նա տանջուած է սիրով, տանջուած է երկար, սաստիկ, չափազանց... իսկ միամիտ աղջիկը հաւատում է նրան, սիրում է և անձնատուր լինում...

Երբեմն նա ինքն, աղջկայ բարեկամն ու աստուածը, սովորեցնում է, թէ ինչպէս պէտք է անել, որ առանց հետևանքի մնայ. կամ թէ ինչպէս պէտք է փշագնել երեխան և այլն:

Երբեմն կիրք զարթեցնելով նա աղջկան ճաշակել է տալիս ամեն ինչ, բացի «վերջին քայլից»,— և այս կոչւում է «պատուաւոր» վարուել:

Ամուսնանալ չի կարող նա, որովհետև կամ պտակուած է արդէն, կամ որովհետև ամուսնութիւնն իր համոզմունքներին հակառակ է, կամ թէ դեռ վաղ է իրան համար ամուսնանալ, միջոցներ չունի...

Եւ վերջապէս նա առանց այդ էլ շատ բուն է արել աղջկայ և մարդկութեան համար. նա պարզեկ է աղջկան ազատ սիրոյ սուրբ երջանկութիւնը և... մի երեխայ: Բայց միանգամայն (և ոչ սակաւադէպ) նա աղջկան ձգում, հեռանում է, երբ այս երեխայի գոյութեան առաջին ակունքայանի տգեղ նշաններն երևում են...

Հապա կնոջ աշխատանքը:

Իրաւ է, ստեղծուել է կնոջ աշխատանքի և կնոջ իրաւունքների հաւասարութեան խնդիր.



բայց մի՞թէ դարձեալ մի պայմանական սուտ չէ այս:

Մի՞թէ մի այնպիսի խնդիր չէ այս, որի մասին ոչ ոք հոգ չէ տանում, և որ ոչ ոք մինչև անգամ առանձին ջանք չի անում լուծելու:

Աւանդ, եթէ այդ խնդիրը լուծելու համար մի անհարկութիւն միայն լինէր, պոռնկութեան խնդրի մի խոշոր մասն ինքն իրան արդէն կանհետանար: Բայց հարց է, թէ ի՞նչպէս է գնահատուում կնոջ աշխատանքը:

Այժմ կանանց ընդունում են բանկերում, ծխախոտի արհեստանոցներում, գրողարաններում, կրպակներում, գործարաններում, հեռադասներում, դաշտային աշխատանքներում և այլն:

Կնոջից շատ բան են պահանջում, բայց քիչ վարձատրում:

Զարմանք բան է, ուրեմն, եթէ աւելի հանգիստ ու կուշտ կեանքի փոքրիկ գայթակղութիւնը լոկ՝ իսկոյն աշխատանքից կտրոււմ է կնոջն ու ձգում «ծախու կանանց» շարքը:

Որքան որ կուզէք գիշեր ցերեկ ճշմարիտ ու լաւ լաւ խօսքեր ասէք, թէ առաջին աշխատանքն սուելի գերադասելի է, քան երկրորդը... Այդ ճշմարիտ և լաւ լաւ խօսքերն այն մեծ պակասութիւնն ունեն, որ իբրև պարտքի ձայն՝ բոլորը պահանջում են, որ մարդս յանուն գաղափարի նահատակուի: Նահատակութիւնը, սակայն, ամեն ընդուն բան չէ:

Եւ անս 16—18 տարեկան աղջիկը պէտք է ընտրութիւն անէ, թէ պէտք է արդեօք օրէնք 15 ժամ տաժանակիր աշխատանք անի, այն կլ ամեն օր, — թէ՞ ընկնի: Եւ նա սովորաբար մեղքն ու փափուկ կեանքը գերադասում է ամենօրեայ տաժանակիր աշխատանքից:

Կրկնում ենք, քաղցն ու կեանքի ծարաւը հզօր են, քան ամեն բարոյականութիւն, և թէ բարոյական քարոզները կամ բարոյական վրդովմունքը ծայրայեղ աղքատութեան և անճար գրութեան առաջ՝ կարգին մարդու համար անվայել և մի գղուելի խեղկատակութիւն է միայն:

Եթէ ուզում էք և պէտք է, որ կնոջ աշխատանքը շլատի պոռնկութիւնը, այնպէս արէք, որ այդ աշխատանքն իր անգօր վարձատրութեամբ բոլորովին խղճուկ բան չգառնայ պոռնկութեան կշտին. այնպէս արէք, որ պատուաւոր բանուոր կինն աւելի կուշտ, հետեւաբար և նախանձելի լինի, քան թէ ծախու կանանց բաժին ընկած «վարադած շրջապատը»:

Անշուշտ ամեն մարդ էլ կը համաձայնի, որ կեանքի մէջ շատ անգամ տղամարդիկ էլ գործ չճարելով՝ պարապ են մնում, կամ թէ բաւարար վարձատրութիւն չեն ստանում, և յաճախ այս սնտեսական նեղ գրութիւնն է նրանց արգելք լինում պսակուելու:

Եթէ հասարակութիւնը կարողանար բարեկեցութիւն ձեռք բերել, այն ժամանակ պոռնկութեան մի խոշոր մասն ինքն իրան կանհետանար:



Պէտք է ուրեմն աշխատել, աշխատել բոլոր ուժերով, քանի որ պոռնկութիւնն իրան յատուկ սարսափելի հետեանքներով սպառնում է ազգերի առողջ զարգացմանը. անհրաժեշտ է սուրը չարիքի արմատի վրայ դնել և այնպէս կոտել:

Աշխատաւոր կանանց մեծ մասը՝ իրանց բոլոր ոյժն ու կարողութիւնը ծախելով հանդերձ՝ չեն կարողանում ապրել. կարիքը ստիպում է նրանց ծախել և իրանց մարմինն ու պատիւը. շատ անգամ նոյն իսկ աշխատանքի տեղն ստիպուած են լինում այսպիսի թանգ գնով ձեռք բերել:

Ամբողջ Ռուսիայի վիճակագրութիւնից երեւում է, որ հսկողութեան տակ գտնուած պոռնիկներից հարիւրից 84-ը աղքատ են, 77-ը զրել կարգալ չգիտեն, իսկ 87-ը հօր ու մօրից որբ են:

Աղքատութիւնը, կարիքը, քիչ վարձատրող աշխատանքը, յաճախ աշխատանք չունենալը, — սրանք են անա այն պատճառները, որ աղջկան պոռնկութեան ճանապարհի վրայ են դնում:

Այդ պատճառներն առաջ են գալիս կնոջ՝ արդի աշխատանքի ասպարէզում ունեցած դերից և նրա իրաւական ու մտաւոր անհաւասարութիւնից: Պոռնկութեանը բաւական զօրեղ հարուած կը տրուի, եթէ այս անհաւասարութիւնը վերանայ, և աշխատաւոր կանանց աշխատանքի վարձը բանուոր տղամարդկանց ստացածի չափին հասնի:

Բայց ո՞ւր են կանոնաւոր կազմակերպուած դպրոցները...

Թշնամուն ճանաչել—նրան կիսով չափ յաղթել կրնշանակէ, ասում է մի անգլիացի փիլիսոփայ:

Կեանքի օրէնքներն իմանալն անհամեմատ աւելի կարեւոր է, քան թէ շատ ուրիշ գիտելիքներ: Իսկ ամենից կարեւորն է այն գիտելիքը, որ մարդուս դէպի ինքնակատարութիւն և ինքնապահպանութիւն է տանում:

Քիչ սովորեցրէք, բայց լաւ կըթեցէք երեխաներին...

Մարդուս ներսում դեռ ևս մնում է հին գազանը. և ճշմարիտ կըթուլթեան նպատակը ոչ թէ այն պիտի լինի, որ այդ գազանը վարժուի, սովորի աւելի լաւ կերպով կերակուր ձեռք բերելու և ամեն դիւրութեամբ ու հանգստութեամբ շրջապատելու իրան, այլ այն՝ որ մարդուս մէջ բոլորովին խեղդուեն կոպիտ բնազդները, և տեղը գարթնեն հոգեկան վսեմ պահանջներ:

Այս բանին հասնելն անշուշտ դժուար է, երկար կռիւ և մեծ չարչարանքներ են պէտք:

Բայց պէտք չէ վախենալ չարչարանքից... այլ որոնել, ցանկանալ...

Ի՞նչ մեծ բախտաւորութիւն, ի՞նչ երանաւէտ երջանկութիւն կը լինէր, եթէ բոլոր մարդիկ յանկարծ հասկանային, որ չարչարանքն է ամեն ինչ:

Չարչարանքից զատ՝ ոչ մի ելք, ոչ մի փրկ-



կութիւն չկայ բոլորովին անկատար մարդու համար, որ ամեն կողմից խեղդուած է կեանքի երկաթի ճանկերի մէջ:

Ի՞նչ կը լինէր, եթէ ամենքը հասկանային այս և չարչարանքի քուրայի մէջ ընկնելով՝ եռային, եփուէին, մխուէին ինչպէս պողպատ...

Այն ժամանակ կեանքի բովից կանցնէին, այն ժամանակ և մի անգամից յաղթանակ կը տանէին, կը մեծանային, կը հասունանային և մինոք երջանիկ կեանքի համար հրաշակերտ յարութիւն կ'առնէին...

Կի՛նս էլ պէտք է կռիւ դուրս դայ:

Թէ հարստութիւնը և թէ շնորհքը պատանմունքի տուրք են, և կի՛նը դրանց վրայ չի կարող հիմնել իր լաւագոյն ապագայի շէնքը, որի մէջ էլ ոչ մայրութիւնն անէծք պիտի դառնայ իր համար և ոչ արամբիութիւնը թխսամայր ու խոհարարուհի դարձնի իրան:

Պէտք է հոգով բարձրանալ. իսկ բարձրանալու համար մի կռուան կարող է լինել միայն անձնաւորութիւնը, որ մի անգամ արդէն հասկացել է իր արժէքը և զիտէ, թէ դրանից աւելի բարձր, կարեւոր ու թանկագին բան չկայ աշխարհին երեսին:

Այսպիսի հասկացողութիւն միանգամից չի ձեռք բերուում, և ոչ էլ կարելի է թէկուզ ամենից իմաստուն դռքի մէջ կարգալով սովորել, — այլ դա հետևանք է կեանքի, մարդկանց և ինքն իրան հետ վարած երկար ու տոկուն կռուի:

Եւ այս ինքն իրան հասկանալն իբրև ինքնարդոյ անձնաւորութիւն՝ տակաւ առ տակաւ իր համար ճանապարհ կը հարթի կեանքի մէջ, թէպէտ մեծ ջանքերով և երբեմն անազին նեղութեամբ:

Կեանքը սխրագործութիւն է. հարկաւոր են ինքնուրաց, գաղափարական աշխատաւորներ՝ բարութեան և արդարութեան համար. մարդ պէտք է միւէ, ամբացնէ իր բարոյական կամքը. պէտք է պողպատի ոյժ ունենալ. հարկաւոր է պատրաստուել գաղափարական կռուի համար:

Պէտք է շտապել...

Չորս բոլորն այնքան շատ ստիպողական և անյետաձգելի գործեր կան ամեն տեղ, այնքան շատ հարկաւոր են գործունեայ աշխատաւորներ, կին թէ տղամարդ. այնքան ընդարձակ ազատ ապարէզ կայ կեանքի մէջ գործով ողջամիտ գաղափարականութիւն ցոյց տալու...

Թող այս ամենը ամբողջապէս տողորի մարդուս, նրա կեանքի խորհուրդը դառնայ, նրա ներքին աշխարհը լցնի մի պայծառ բովանդակութեամբ:


Հարկաւոր չէ և պէտք չէ ապրել ուտել խմելու համար, որ մահից վատ է: Այլ պէտք է ուտել ապրելու համար:

Մի մոռանար երբէք, որ դու մարդ ես:

Վ Ե Ր Զ










510



176.5  
F-94